

5623  
5624  
5625

1888

891. 99

Ch. 44

(b)

2011

Դ. ԱՂԱՅԵՍՆՑ

# ԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՆՈՒԵԼ

ԵՐՐՈՐԴ ԳՐԱԺՈՒԿ

ՊՈՐՈՋ ԳՐԱՏԱԿԱՆ  
"PAROS" BOOK STORE  
806 S. SOLVAY AVE.  
DETROIT, MICH.

---

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մ. Վարդանեանի \*\* Տիպ. Մ. Վարդանյ, Գանօ. ՍԼ.

1893

ԱՐՄԵՆԻԱ ԳՐԱՏԱԿԱՆ

ARMENIA BOOK STORE

P. O. BOX 62, STA. A

## ՀԱՅՈՒԹ ԻՎ ՀԱՅՈՒԹՈՒՄ

Дозволено ценз. Тифлисъ, 13-го Мая. 1893 г.



113554-42

3124-20-P

Աւետիքը շատ լաւ գիտէր այն առաջը,  
թէ «վէմն ապառաժի է հանդիպել», բայց  
չէր ուզում խոստովանել, որ եթէ ինքը վէմ  
չըլինէր, իր որդին էլ ապառաժ չէր լինիւ։  
Մոլեռանդ ծնողները մոլեռանդ էլ զաւակներ  
կունենան, թէկուզ միմեանց հակառակ գա-  
ղափարով։

Գեղամիջով հեռանալիս՝ Արութիւնի առաջը ոչ ոք չը կտրեց. չէր էլ կարծում ոչ ոք, որ նա գլուխը վեր կալած՝ գնում է կորչելու, որ ազատւի հօր հալածանքից. Միժամից յետոյ մայրը ձիւտորներ ուղարկեց որդու ետեւից, որ յետ դարձնեն, բայց չը գը-

տան. նա ճամփից շեղւելով՝ մտել էր անտառն  
ու անյայտացել:

Արութիւնը շատ հեռու չըգնաց. նա  
պտրտում էր կօռու եւ Շիրակի գիւղերում,  
ուր մի տեղ վարժապետ էր դառնում, մի այլ  
տեղ տիրացւութիւն անում. մի տեղ նախրա-  
պանի հետ էր ընկերանում, մի այլ տեղ չօ-  
քանի, բայց ոչ մի տեղ մի քանի ամիս չէր  
մնում, ոչ մի տեղ նրա ոտքը չէր կապում:  
Նա կարծես մի բան էր կորցրել, ման էր  
գալիս որ գտնի, բայց չէր գտնում. չէր իմա-  
նում, որ կորածն ինքն է, ինքը պիտի  
գտնելը ում եւ իցէ ձեռքով եւ լոյս աշ-  
խարհք հանւէր: Նատ անգամ սարից սար,  
հովիտից հովիտ անցնելով՝ որսորդութիւն էր  
անում եւ նրանով հոգում իր հագուստն ու  
կապուստը, թէեւ նպատակն այդ չէր. նա  
թափառում էր անգիտակից ինչպէս մի վայ-  
րենի:

Այս վայրենի վիճակը զարգացրեց Արու-  
թիւնի ներքին եւ արտաքին զգացումները, նրա  
տեսութիւնը, լողութիւնը, հոտառութիւնը,  
ընազդումը, մտառութիւնը, նկատողութիւնը,

խորհողութիւնը եւ երեւակայութիւնը: Նա  
զարգացաւ եւ ֆրզիքապէս: Գարնանային եւ  
ամառային բացօդեայ կեսնքի մէջ, հով ու  
զով տեղերում, ծաղկապատ լեռներում, ան-  
մահական աղբիւրների ափերում, մութ ան-  
տառներում եւ ձորերում շարունակ թափա-  
ռելով՝ Արութիւնը մի բոլորովին նոր մարմին  
հագաւ, աւելի առողջ ու զօրեղ, աւելի հաստ  
ու կոպիտ, քան թէ առաջ էր, Ո՞վ կարող էր  
կարծել, որ Արութիւնը սեւը սիպտակից ջու-  
կել գիտէ, թէ նա երբ եւ իցէ Ալբերտի  
մթնաբանութեան ծանր լուծի տակ ընկած է,  
թէ նա Զամշեանը ծայրէ ի ծայր անգիր է  
արել աշըլի խաղի պէս:

Չընայած արտաքին կոպտութեանը, նա չը-  
կորցրեց որտի գիւրազգացութիւնն ու ընքու-  
թիւնը: Բնաւորութեամբ երկու սեռերի մի  
խառնուրդ էր ներկայացնում եւ այդ երկու  
իրար հակառակ կողմերը մերժ հաշտում եւ  
օգնում էին միմեանց եւ մերժ կռւում եւ  
ընկճում միմեանցից, նայած, թէ որտեղ որ  
կողմն էր աւելի պէտք, կամ որպիսի տրա-  
մադրութիւն ունէր հոգին: Բնութիւնը նրան

այնպէս էր կազմակերպել, ինչպէս գարբինը  
նրա երկասյրին, խանչալը, որի մի բերանը  
հաստ էր թողել՝ քար եւ քոլ կտրելու համար,  
միւս բերանը՝ բարակ՝ փափուկ բաները ածլու  
պէս թռցնելու համար։ Նա մի գազան էր  
եւ միեւնոյն ժամանակ մի սոխակ. գոռում  
էր գազանի պէս եւ երգում սոխակի նման։  
Պատահմունքը երբեմն այնպէս է կրթում  
մարդու, որպէս կարող չէ կրթել ոչ մի տա-  
ղանդաւոր գաստիարակ. ով կարող է ար-  
հետական կերպով տալ մէկին այն, ինչ որ  
միայն բնութիւնը կարող է տալ, բնութիւնը,  
որ գիտէ չոր անապատներից մարգարէ յա-  
րուցանել։ Մտածող միտքը, զգայուն սիրու  
միայնութեան մէջ, բնութեան գրկում, նրա  
մեղմ ու աշեղ երեւոյթների ազդեցութեան  
տակ՝ վերանում է մոքով եւ յափշտակում  
մինչեւ երկինք, հմայւում, կախարդում է եւ  
հոգով ու մարմնով անձնատուր լինում մի  
աներեւոյթ Զօրութեան։ Այնուհետեւ գիտակից  
ոչինչ չի մնում նրանում. նա վարւում է  
ինչպէս մի խենթ, բայց խելքը չըկորցրած,  
այլ վերացրած, թուցրած գէպի վեր, գէպի

քարձրը, ինչպէս առասպելական Պեգասը Հէ-  
կիկոնեան լեռների մթնոլորտում։  
Արութիւնը շարունակ մոտմում եւ մըր-  
մուում էր գերւիշի նման։ Խօսակից ընկեր  
չունենալով, խօսում էր ինքն իր հետ. եւ ինչ  
օգային ամրոցներ ասես, որ չէր շինում, ինչ  
ասես որ չէր դառնում «իբր թէ»։ Իրապէս  
մի մութ անտառում կամ մի լեռան գագաթի  
վրայ նստած՝ երեւակայութեամբ նա վայելում  
էր աշխարհի բոլոր վայելութիւնը, բոլոր  
փառքը, պատիւը, երջանկութիւնը, ընկնում  
էր եւ սարսափելի նեղութիւնների մէջ, բայց  
ամեն տեղից գուրս էր գալիս յաղթութեան  
դրօշակը ձեռին։ Եւ ինչքան բարկը էր հաս-  
ցնում մարդկութեանը, ինչքան երջանկացնում  
նրանց եւ փոխարէնը վայելում նրանց գովա-  
սանքն ու օրհնութիւնը։ Դեմութենէսի պէս  
ճառեր էր ասում եւ ատենաբանութիւն ա-  
նուում, Քեօրօղու պէս երգում էր յաղթական  
եւ քաջութեան երգեր, Քեարամի պէս ողբում  
էր եւ փնտրում իր Ասլուն։ Նրգում էր եւ  
անպաղաստից առանց կանգ առնելու, ինչպէս  
չու-չարա, որ կընշանակէ ոտանաւորով ազատ

խօսող։ Այդ ընդունակսվթիւնը նրա մէջ նման էր ճարպիկ լարազացի եւ զօրեղ ըմբշի ոգեւորութեան։ Այդ ոգեւորութիւնը տեսանելի եւ շօշափելի է։ Ըմբիշները ուռչում են, նրանց բոլոր երակները լցւում է արիւնով։ լարախաղացները թեթեւանում են, կարծես թեւաւորւում են։ Այս միեւնոյն վիճակի մէջ են ընկնում եւ աշըզները ոգեւորւած ժամանակ, մանաւանդ իրար հետ բաս մտած ժամանակ։ Արութիւնը ոգեւորւում էր թէ ըմբշի, թէ լարախաղացի եւ թէ աշըզի նման։ Նա զուրկ չէր առաջինի ուժից, երկրորդի ճարպիկութիւնից եւ երրորդի ճարտարութիւնից։ Միայն սաղ չունէր, եւ ոչ ածել գիտէր։ Հայրը չէր թոյլ տւել սովորելու։ Նա շրւի էր ածում, որովհետեւ հեշտ էր դրա ձեռք բերելը։ Ինքն էր շինում։ բայց շատ էր ցանկանում մի սազ էլ ձեռք բերել եւ իսկական աշըզ դառնալ՝ աշըզութիւնը բարենորոգելու նպատակով։ Այդ ժամանակ լաւ աշըզները շատ մեծ հոչակ եւ հեղինակութիւն ունէին ժողովրդի մէջ եւ մեծ յարգանք ու պատիւ էին վայելում։ Բայց Արութիւնն ընդդէմ էր նրանց թէ յանգա-

հիւսութեան անձունի ձեւին, թէ թուրքերէն երգելուն եւ թէ մանաւանդ նրանց չափից դուրս ստայօդ պատմութիւններին, որոնցով շարունակ նախապաշարմունքի մէջ էին պահում ժողովրդին։ Դրանք Աւետարանի եւ Աստւածաշնչի պատմութիւնները ժաղկացնում էին եւ պատմում այնպիսի աւելւածներով, որ տէրտէրների բերանը քաց էր մնում։

Մէկ անգամ լսեց, որ Հայդարբէգ գիւղը մի շատ անւանի աշըզ է եկել, թէ նա շատ աշըզների հետ է բաս մտած եւ սազերը ձեռքներիցը խլած, մտքումը դրաւ գնալ նրա հետ բաս մտնել, յուսալով՝ որ անպատճառ կը յաղթի եւ սազը ձեռքիցը կառնի։ «Արովեանցի ասած, խանչալիս քարը հօ չի վէր ընկնիլ, մի աշըզ էլ ես կը դառնամ», ասաց Արութիւն ինքն իրան։ «Եթէ ես կը յաղթեմ, սազը ձեռքիցը կառնեմ, իսկ եթէ նա կը յաղթի, ես իմ հրացանս կը տամ իրան, բայց յետոյ մի թաքուն տեղ առաջը կը կտրեմ, համ իմ հրացանս կը խլեմ ձեռքիցը։ Համ իր սազը։ Թող գնայ՝ որտեղ որ իրանը կատի, իմն էլ էնտեղ ասի։ Դրանց օյին գալը մեղք

Հէ, բօշի նման դունէ դուռը ման են գալիս,  
ժողովրդին սուտ սուտ բաներ հաւատա-  
ցնում. յետոյ որ մի ուղիղ բան ես ասում, էլ  
չեն հաւատում. ասում են՝ գիտ ես: Դէ որ  
գիտ եմ, գիտ եմ, ես էլ գժութիւն կա-  
նեմ» . . .

Այսպէս մտածելուց յետոյ Արութիւնը  
ճանապարհ ընկաւ գէպի Հայդարքէգ գիւղը:  
Արժանի է նկարագրութեան նրա այդ ժա-  
մանակա հագուստը: Նա ունէր վայրի վա-  
րադի հաստ կաշւից տրեխներ, արխալուխի  
փէշերքը հաւաքած էր բրդէ շալւարի մէջը,  
ոսի չուխա ունէր հագին՝ փէշերքը վեր կա-  
պած, մի մեծ՝ թարաքեսամի փափախ ունէր  
գլխին՝ ճակատի կողմը ներս ծալած: Վայրի  
այծի կաշւից մի պարկ ունէր շալակին՝ մէջը  
մի կտոր սեւ հաց եւ մի կտոր էլ թել պա-  
նիր: Ատրճանակը մէջը կողմից գոտիկը խը-  
րած, խանչալը ձախ կողմից կախած, հրա-  
ցանն ուալը գցած եւ մի հաստագլուխ թա-  
ւարդին անունով մահակ ձեռքն առած: Ա-  
րութիւնի այսպիսի տեսքը՝ նրա երկար հա-  
սկի, վառվուն եւ խոշոր աչքերի, արհա-

մարհող հայեացքի եւ յանդուգն բնաւորու-  
թեան հետ միասին՝ շատերին կասկածանքի  
տեղիք էին տալիս, թէ նա գուցէ մի փախս-  
տական աւազակ է: Այդ կասկածն աւելանում  
էր, երբ Արութիւնին հարց ու փորձ անելիս,  
նա սուտ չէր ուզում հնարել, ուղիղն էլ  
չէր յայտնում, թէ ով է կամ ով չէ: Արու-  
թիւնն այդ չէր նկատում եւ ոչ մտքովն անց  
կացնում: թէ կարող են այդ տեսակ կարծիք  
ունենալ իր վրայ, եթէ ոչ՝ նա կարող էր  
նրանց կասկածը փարատել: Նա աւազակու-  
թեան ոչ հակում ունէր եւ ոչ ընդունակու-  
թիւն. աւելի շուտ քաղցած կը մեռնէր կամ  
ինքնասպանութիւն կը գործեր, քան թէ գո-  
զութիւն կանէր, որովհետեւ նա իր մանկու-  
թեան օրից մինչեւ այն օրը մի ամենաշնչին  
քան գողանալու կամ թաքուն վերցնելու  
միտք անգամ յղացած չէր: Նրանից կասկա-  
ծում էին աւելի շիրակեցիք, որոնք մեղք էին  
համարում զէնք կրելը, մանաւանդ նրան  
քանեցնելը. եւ սրա համար էլ շատ յաճախ  
երկու թուրք երիտասարդ նրանցից մինչեւ  
յիսուն հոգու իրանց թրերի առաջն էին առ-

նում, ահագին կարաւանի բոլոր եզները քը-  
շում անց կացնում Արփաչայը եւ անհետա-  
ցնում:

— Հախն է, ասում էր Արութիւնը, ին-  
չու ձեզ էլ չէին կոտորում այդ անպիտան-  
ները . . .

— Զանըմ, ի՞նչ կըսէ, բացականչում էին  
շիրակցիք:

— Չոռ ու ցաւ կըսեմ... անամօթ յիմար-  
ներ, ի՞նչ երեսով էր երեւում դուք ձեր օղ-  
լուշալին. ինչու գետինը չէք մտնում: Մեր  
գեղի երեխան անգամ եթէ կողոպտւի, նա  
կամացի տուն գնալ հօրն ու մօր աշքին երե-  
ւալ. դուք ահագին զռփի տղամարդիկդ ի՞նչ-  
պէս չէք ամաչում կողոպտւել երկու թուրք  
գեադայի ձեռքով . . .

Արութիւնը հեռացաւ այդ տեղից եւ  
գնաց Լուի, ուր եւ իմացաւ համբաւաւոր  
աշըլի գալը: Նա գնաց Նայդարբէգ եւ հան-  
դիպեց աշըլին այն ժամանակ, երբ նա ու-  
զում էր մի մարաքեա սարքել մի քանի աշա-  
կերտների հետ: Մարաքեայի նիւթը պիտի լի-  
նէր Դուդի դուշի հէքիաթը: Գիւղի քէթխու-

դաները, քահանան եւ բոլոր մեծ ու փոքրը  
հաւաքւել էին քեօխւայի տան սրահումը եւ  
նստել ծալապատիկ՝ մեծերը թաղիքների եւ  
միւմները գետնի վրայ: Արութիւնը մօտեցաւ  
աշըլին համարձակ եւ գլուխ տալով՝ ասաց.

— Է՛շին օլա, ուսուա, (աշխուժութիւն  
լինի, կամ, կը ցանկամ):

— Էշին չօխ օլա, սաֆա գեալդն, պա-  
տասխանեց աշըլը (էշիդ շատ լինի, բարի  
եկար):

Սրանք սկսեցին խօսել թուրքերէն, ես  
կըդնեմ այստեղ նրանց ասածների եւ եր-  
գածների թարգմանութիւնը:

Ա ՐՈՒԹԻՒՆ

Պատւելի վարպետ, չի կարելի արդեօք,  
որ մի բոպէ գօտիկ գօտիկ զարկենք, մարի-  
փաթ մարիփաթի (այսինքն փորձենք մեր ուժն  
ու շնորհը, բաս մոնելով): Ես լսել եմ քո  
համբաւաւոր անունը եւ եկել եմ, որ քեզ  
հետ բաս մոնեմ: յոյս ունիմ, որ չես հրա-  
ժարւիլ:

Ա շ ը ռ Ա շ ը ռ  
Գլխիս վրայ, աչքիս վրայ, մեծ ուրա-  
խութեամբ, շատ սիրով, շատ սիրուն, շատ  
բարի . . . Բայց իմ սիրելի, իմ աչքիս լոյս,  
ես տեսնում եմ, որ դու աշըղ չես, դու սազ  
չունիս, կամ սազդգ խել ես տըել, ինձ մօտ  
առանց սազի եկել: Ոչ, այդպէս չեն լինում  
ինձ մօտ եկողները. Նրանք սազով են գալիս եւ  
առանց սազի գնում: Սիրելիս, դու մոլորած-  
ես, ջահիլ ես, քեզ խաբել են: Իմ գիրն այն-  
պէս գիր չէ, որ ամեն մարդ կարդայ. իմ  
ջուրն այնպէս ջուր չէ, որ ամեն մարդ խմի.  
Ես այնքան խոր եմ, ինչքան ծովի յատակը,  
այնքան բարձր, ինչքան Մասիսի գագաթը:  
Ի՞նչ կասես, «ա՞ն էտիլ» (դու լաւը, այսինքն  
ինձնից լաւը՝ եթէ կարող ես, դու ասա):

Ա ը ո ւ թ ի ւ ն

(Մտքումը). Այս ի՞նչ ճարտար մարդ է  
սրան կարելի չէ յաղթել: Ե՞՞չ, ի՞նչ եմ հո-  
գում, ինչ կը լինի՝ կը լինի, ձու հօ չեմ, որ

կոտրւիմ (բարձր) Գիտեօ ի՞նչ կայ, վար-  
պետ. դու ճշմարիտ ես ասում, ես աշըղ չեմ:  
ուզում եմ աշըղ դառնամ, բայց սազ չու-  
նիմ: Քո սազը իմ աշքումն մոնել է: Արի բատ  
մտնենք, հիմի ինչ կը լինի՝ կը լինի: Եթէ դու  
կը յաղթես, ես իմ հրացանս քեզ կըտամ, որ  
«Ղոփիմ—Բախչասարայի» է, երկու հարիւր  
մանէթով է առնւած: Թող վկայ լինին էս  
քէթխուդաները: Բայց եթէ ես կը յաղթեմ,  
որ Աստուծով յոյս ունիմ, այն ժամանակ,  
ինչպէս աշըղների օրէնքն է, դու քո սազը  
մեծահոգութեամբ ինձ կըտաս:

Ա շ ը ռ

Եատ լաւ, յոյժ բարի: Բայց դու աշըղ-  
ների կանոնը գիտե՞ս. դու գիտե՞ս, որ սկզբի  
ասելու իրաւունքն իմն է, սրովհետեւ դու  
ես եկել ինձ մօտ, դու ես ուզում իմ սազը  
ձեռքիցս առնել, որ էրազումդ էլ չես տեսնիւ:

Ա ը ո ւ թ ի ւ ն

Գիտեմ, գիտեմ, բոլոր կանոնները գի-  
տեմ, կարող ես սկսել,

— Զէ, աշըղիս վախեցրի ասեց Արութիւնն իր մտքումը:

Հարցրին մէկ մէկի անուն, աշըղն ասաց,  
որ իր աշըղական անունը Շոհլայի է: Արութիւնն էլ իր անունը փոխեց, ասելով՝ իմ  
անունն էլ Քերօքէ է: Արութիւնն իր մահակը սազի ձեւով բռնեց եւ ծունկ չոքեց  
աշըղի դիմացը: Սկսեցին առաջ ու առաջ  
խաղով պարծենալ: Բայց որովհետեւ սկզբի  
ասելու իրաւունքը աշըղինն էր, նա առաջ  
սկսեց. Արութիւնը պարտաւոր էր հետեւել  
նրա խաղի «զաֆիխին», որ նշանակում է  
դուռն Աշըղական խաղի բոլոր տները մէկ  
դուռով պէտք է դուրս գան, այսինքն մի  
յանգի վերջաւորութիւնով: Արութիւնն եւս  
պէտք էր նոյն յանգի վերջ տար իր տներին,  
ինչ յանգի որ վերջացնէր աշըղը, եթ ամ՝  
ամ, եթէ ան՝ ան, եթէ ազ՝ ազ, եւայն:

Ծոհլայի

Ընդունիր ողջոյնըս, աշխոյժ պատանի,  
Համարձակ քաջի պէս դուրս արի մէյդան:

Թող չենէ ասպարէզ, ով շնորհը չունի,  
Աշըղ անուն տալը նրան չէ արժան:

Քերօքէ

Կընդունեմ ողջոյնը, պատւելի վարպետ,  
Եւ կրտամ խօսքերիդ մէկ մէկ պատաժսան,  
Չեմ մնալ քո առջեւ բժժամիտ, անգէտ.  
Համարձակ կանգնող եմ քո դէմ յանդիման:

Ծոհլայի

Կանչել եմ անունը Մշու Սովորանի,  
Որ մարդին նամարդի նա մոհդաջ չանի.  
Երեւի քաջ վինել դու չես արժանի,  
Քեզնից պէտք է խլել քո զէնք՝ հրացան:

Քերօքէ

Քաջ եմ արդեօք թէ ոչ, այդ շուտ կտեսնես,  
Երբ ինքըդ քո զէնքից՝ սազից կըզրկւես,  
Զուր ասած խօսքերըդ կրկին յետ կառնես,  
Կասես՝ մեղայ եմ քեզ, ի՞նչ արիր, եաման:

Ծոհլայի

Դմուկեթել սազին շատերն են հաւնել  
Շատերն են քեզ նման խլել ցանկացել,

Բայց իրանք են իրանց սաղիցը զրկւել, բայց  
Եւ սարսափած փախել մինչեւ Հնդստան։

Ք ե ր օ ք է

Ես փախչող պոտուղ չեմ, բնաւ զրկարծեաց՝  
Լաւ կանես, այդ յուսով քեզի չը խարես,  
Դիտեմ որ փախչելու ինքը սովոր չես, և  
Բայց հիմա կը փախչիմ մինչեւ Զինաստան։

Շ ո հ լ ա յ ի

Դու որ կաս, բմբուլ ես, ես որ կամ, քար եմ,  
Կարծում ես, թէ ես էլ քեզ պէս անձար եմ.  
Սպասիր, քո առջեւ մի թակարդ լարեմ,  
Որ դու ընկնիս մէջը ճնճղուկի նման։

Ք ե ր օ ք է

Ես թակարդ լարող եմ, թակարդ ընկնող չեմ,  
Ինձ ինչ պէտք է ասես, որ ես զբգտնեմ,  
Բայց քո վլրադ այսպէս մի քար կը դնեմ,  
Որ հէնց մնաս տակին այժմ եւ յաւիտեան։

Այստեղ քեթխուղաները խնդրում են,  
որ վերջ տան պարծենալուն իրանց ինք-  
նագոլութեանը, ասելով՝ բաց մա մշտակ

— Դրան վերջ չըկայ? դու կասես, նա կա-  
սի, մինչեւ որ պրծնէք, Սատւածանից իրեք  
խնձոր վէր կընկնի, որ ասենք՝ մէկն ասողին,  
մէկը՝ լաղին։ Նուտ արէք, թէ բան ունիք  
ասելու, ասեցէք, տեսնենք որըդ էք յաղթ-  
ում, որըդ չէ։

Շ ո հ լ ա յ ի

Դուք շատ էք վլազում, թող լինի այդպէս,  
Սրա պէս պարծեցողին չեմ անիլ անտես.  
Աշը Նոհլային եմ, գիտուն, օրտատես,  
Կեանքում չեմ եղել ցածրողի, անքան . . .

Ք ե ր օ ք է

Քո բոլոր գիտութիւնդ ինձ վաղուց է յայտ,  
Մի նայիր, որ սաղի տեղ ձեռքումն է վիայտ.  
Անքախտ Գերօբէն եմ, աշը եմ անյայտ,  
Ո՛չ թէ այսպէս մնամ մինչ օրն իմ մահւան . . .

Խքնագոլութեանը ըստ սրբութեան  
հետեւեց հարց ու պատասխանը, որով պիտի  
երեւէր յաղթողն ու յաղթւողը . . .

ամ ամ անսայ Շոհլայի մայք  
Կախիր, թէ գիտոն եօ, ով քաջ ձեւացող,  
Այն ով էր, որ աղբիւր հանեց ոսկորից.  
Այն ինչ պողաւոր էր, որ երեսին ոմէր քօղ.  
Ո՞վ է ծնւել երկու անգամ մօր փորից:

Քերօքէ

Ես քո ասածներին կամ պատրաստ լսող,  
Սամսոնն էր, որ աղբիւր հանեց ոսկորից,  
Պողաւոր՝ Մովսէսն էր, որ երեսին ունէր քօղ,  
Յօնան ծնւեց երկու անգամ փորերից:

Շոհլայի

Ի՞նչ ծառ է, որ անհող, անջուր է բսնում,  
Առանց տերեւների ճղներ է գցում.  
Ի՞նչ բանն է սուր քան թուր սրուի մէջ ցցւում:  
Այն ինչ արարած է որ ծնւեց հօրից:

Քերօքէ

Բախրի եղջիւրները անհող, անջուր են բսնում,  
Առանց տերեւների ճղներ են գցում,  
Դառը խօսքն է արտօւմ սրի պէս ցցւում:  
Քո կարծիքով Եւան ծնւել է հօրից:

ամ ամ զո միՇոհլայի մըմաք  
Վարդաւույաց ու ամ զրայի զի զժազաւ  
Այն ով էր որ սայլով երկինք վերացաւ.  
Սողոմոն իմաստունը ինչ բան չիմացաւ.  
Կարմիր ծովը քանին տեղից պատռեցաւ,  
Շոհլային եմ շատ լաւ տեղեակ բոլորիցաւ

Քերօքէ

Եղիան էր՝ կառքով երկինք վերացաւ.  
Սողոմոնն իմ պէսի միտքը չիմացաւ.  
Կարմիր ծովում տասներկու տեղ բացւեցաւ.  
Քերօքէն եմ, շատ ու շատ գոհ այս օրից...

Նօրաթն. ընկաւ Արութիւնին, որ այժմ  
նա հարցնէր եւ աշըզը պատասխանէր. նա էլ  
սկսեց, բայց ոչ թուրքերէն, այլ հայերէն, որ  
նոյնութեամբ գնում ենք այստեղ:

Ես քո սուտ հարցերը մէկ մէկ լուծեցի,  
Չեմ ուզում հետեւիլ քո մոլորութեան.  
Հենց հիմի մի թեթեւ բան մտածեցի  
Ո՞վ է հիմքը դրել Հայոց ազգութեան:  
Շոհլային մնաց լռւած, սիրթնած, չի-  
մացաւ ինչ էր պատասխանել, բայց քէթիւ-

գաներն ստիպեցին Արութիւնին, որ նա ա-  
սարտէր իր խաղը. նա էլ շարունակեց. —

Եթէ գումար գովիճիր Հայոց քաջերին, մնարած  
Մի համբայր կը տայի ոսազիդ, սիմերին, և զամ  
Բայց դրւ հաւատում եմ շինծու բաներին,  
Չը գիտես ովքեր են Արամ ու Տիգրան:

Քեզ Սուրբ Կարապետը շնորհը է տըւել,  
Պարզամիտ ամբոխին սուտ բաներ ասել.

Դու Հայերէն անգամ չը գիտես երգել,  
Որտեղից կիմանաս՝ ով էր Գայլ Վահան:  
Ես խեղճ Քերօքէն եմ՝ սարէսար ընկած,  
Մնալաշտ հօրիցս զրկւած, հալածւած,  
Թէ դու էլ լինէիր ինձ չափ կարգացած,  
Կերգէիր անդադար Հայ ու Հայաստան. . .

— Եյվալլա, ասաց աշըղը, սազը գնելով  
Արութիւնի առջեւը: Արութիւնը սաստիկ ու-  
րախութիւնից չիմացաւ ինչ էր ասել, արդեօք  
քեօուօլի՛, թէ մի ազգային երգ. յանկարծ  
միտն ընկաւ իր սովորական բայցաթին, որ  
ամեն ուրախ ըովէում երգում էր, եւ ակսեց  
երգել. . . ըստ յամախառապ ով մի արան

ամ յայլ Աշող ըմ, չալ քչեղակ, ողայլ ով ցըզան  
Մըհանի կանչիմ քու տեղակը Նմայիք  
շքրա Ախմիդ չըմ թահ հըմանչիմ ում —  
ամի ածղայ ըմ ծիլ ծիլ կը կանչիմ? մա՞  
մասք միածդշ ծառախ այս ցիզայ առան  
Այս բայցաթին մի շատուհին հանելուկ է,  
Խաչենու բարբառով ասած. Դշանակում է  
գրած բան, գիրք, նամակ: Արութիւնը այս  
բայցաթին ասեց ու սազը վեր առաւ գնաց:  
Եւ Տէս ովքէր, տղէր ջան, բացականչեց  
քէթխուդաներից մէկը զարմանալով, երբ որ  
Արութիւնն արգէն հեռացել Եր բաւականին,  
առաջութիւն բերելով բարոր, հանդիսականների  
վրայ Եւ մովքէր ով սմանա զանա լրդք  
մա ծշմարիտ, էս ինչ զարմանը էր առօս,  
առ ալիս ինչ հրաշք էր զայ ով միան միջդք

— Տեսնես երկնքիցն էկաւ, թէ գետնի  
տակիցը. Զանանի ու միջդքը —  
լոյն բարաբաստանայ էր, թէ հրեշտակ...  
ու ծուռ Դա հողեղէն չէր... խօսեց վերջապէս  
աշըղը, որը որ ամենին էլ փոխ առափոխ ար-  
տայցայտեցին իրանց զարմանցումը: Աջողեղէն

մարդը չէր կարող իմ ձեռիցը ստպ խլել։ Ես  
գիտեմ որում։

— Ուստին ճշմարիտ է ասում, տղէք  
ջան, միջամտեց տէր Կարմապետը, — թա թա-  
մաշա չարիք նրա վառւած էրեսին, կասե-  
նայիր Ստեփաննստանախավը կայի էրեսն ըլի...  
Անումն ինչ էր նրան։

— Քերօքէ . . . . Հաւատացէք, նա  
հրեշտակ էր, մարդի շոր հագած, էն էլ  
թուրքի.

ախըր սուրբերը չիմ էլ թուրքի շո-  
րով են էրեւում . . . .

— Աստւած դրա ոտն սողուրով անի մեր  
գեղի համար. տեսնես՝ ինչ կընշանակի . . . .  
քուօնդատի՛ մեր գրբացն էլ ըստի չի, թէ մի  
գրին մալիկ էր արւել, տեսնէինք ինչ ա ա-  
սում . . . .

— Գրբացն ինչ ա իմանում, թէ հրեշ-  
տակի գալն ինչ կը նշանակի, ասեց տէր հայ-  
ըը, — թայց ետ տեսնում եմ, որ հիմի Աստծու  
ազըը քաղցրացել ա մեզ վրայ, մեր ազգի  
վրայ, Բա քըլսեցի՛ ը, որ ասեց — Ծիրմալուա-  
նթէ դու գովէիր Հայոց քաջերին,

Մի համբայր կը տայի տաղիդ սիմերին...  
Մեր Գէորգն ու Բաղդասարը հիմի Թիվլիկ  
են, ընդիանց գրեր են ուղարկում, որ ես  
կարթամ, դուք անկաջ դնէք, բայց, մեղքս  
չեմ թաքցնիլ, ալարը էկել ա, թէ կարթամ:  
Գրում են, թէ՝ «Ժողովուրդիդ քարոզի . . . .»  
Էլ չեն գիտում թէ ժողովուրդի գլուխն էն-  
քան ա հաստացել, որ մամռնակալել ա: Էդ  
Քերօքէն՝ ով գիտէ՝ հիմի նրա համար է-  
կաւ ուստի սազը խլեց, որ ինձ զգուշացնի,  
միտս բերի մեր էրեխոց գրածը, թէ չէ մի  
օր էլ կը գայ իմ փիլոնը կը խլի . . .  
Ուստա, Աստուծով մխիթարւես. լաւ է,  
շատ մի նեղացնիլ սիրալդ, Աստւած ողոր-  
մած է, մի նոր սազ կառնենք քեզ համար.  
օրհնեալ լինիս, դու էլ այսուհետեւ հեյեար  
ասա, ինչ որ ասում ես . . . . Հայոց լեզուն  
Աթամի լեզուն ա, ամեն լեզից հարուստ,  
ամեն լեզից քաղցր, էս սահաթը մեր նա-  
րեկի նման գիրք ոչ մի ազգ չունի, չունքի  
ուրիշի լեզուն աղօթք անելու համար յարմար  
չի գալի. բայց Հայոց լեզուն էնպէս լեզու ա,  
որ ամեն բանի էլ յարմար ա գալի. կուզես

աղօթք արա, կուզես անըծի, կուզես գովի, կուզես փոխ, փոխ փոխ, փոխ, կա ուզում Ուստ տա, Են ինչ անուններ էր տալիս Քերօբէն, բա դու ասում ես՝ ոչ մի վարդապետ, ոչ մի եպիսկոպոս չի կարող ինձ չափ բան գիտենալ, բա ինչի՞ չը կարացեր պատասխան տալ Ես որդիանց գիտենամ, պատախանանց աշըզ, — ըսթաբից սաւահի, մենք ուրիշ գիրք չենք ընդունում, Նահաթլամա (Նզովը) է դրած մեր հին ուստաներից, ես ինչ մեղաւոր եմ: Սյեբենի տեղ էլ մեզ ամփ ըէլ են սովորցնում, որ աւելի աւելի, զագուշացնաման, զագուշացնաման, իսպան միտքն ու զօրութիւնը հասկանանք, իմանանք, հիմի որ ես ձեզ ասեմ — «Բէյի, զային սէյ, օլսէյիֆ տըր, քեափ թէյինան բէյ», գուք չէք հասկանալ, բայց տմէն աշըզ էլ դաս է առեւ գիտէ որ բէյի, զային սէյ՝ կընշանակէ՝ Պօզոս. քեափ, թէյինան բէյ՝ քըթաբ. (Պօզոսը կարդացել է ս, գիրքը): Եթէ ասեմ՝  
 «Քիմ սախաղի ջանդա զափ, վով, բէյի, գալ» (Ռվ պահեց իր մարմնումը որդի).  
 Զափ, վով, բէյի, գալ՝ կը նշանակէ

զուրդ, որդ, ճիճուռ իս Յօր երանելու համար է ասած, չունքի նա իրա ջանումը որդ պահեց արրեշումի ճիճուռ էլ նրան ջանիցը բհամ էկաւ, նրանից առաջ ըլ կար էս էսպէս խաղերը՝ զորդ ա՝ դժար խաղեր են, բայց նահաթլամա չեն, քըթաբլամա են, չունքի Յօր երանելին քըթաբի մէջն աւ հայց տք հիմի Աստևածուրիշ թաւուր ա կամեն նում, «կամք տեառն օրհնեալ եղիցի», ես էլ իմ աղին (ս, սկարապետին)՝ կը ինդրեմ, որ ինձ ուրիշ թաւուր շնորհը տայ: Դէ մեր տէրտէրն էլ դու ես, գոււմեր հայոց քաջերի պատմութիւննաքառ, յես էլ նրանց գովեմ, բարձրացնեմ: առ յայտնութիւնը զանուք ցան: Ես աշըզ հօ չեմ որ քեզ խաղ Սովորեցնեմ, ձկատախաննեց տէրտէրը, որպէս թէլ լաւ յը հասկանալով աշըզի պահանջը: Առ յայտնութիւնը մի է առում ինձ խաղ սովորեցնելու, իսպան ուզում, յես կը սովորցնեմ քեզ: Դու մինդ որ ամեն օր Այսմաւուրը կարդում ես, մենք անկաջ ենք դնում, Են պէս էլ Հայոց ազգի քաջ տղամարդոց պատմութիւնը կարդա, մենք անկանջ դնենք: Այ,

ինչ եմ ասում. ես քեզանից խաղ չեմ կուզուզում:

— «Կարդամ» . . . «ականջ դնենք» . . .  
Ես որդիանց կարդամ, ինձ կարդացրել են,  
որ ես կարդամ . . .

— Դէ ասա՝ չեմ գիտում, էլ ինչ ես  
կը մկմաշնում. դու որ տէրտէր ես, չես գի-  
տում, ես որդիանց կը գիտենամ. էլ ուր ես  
վրաս ծիծաղում . . .

Թռղենք տէրտէրին ունացըին, որ ի-  
րանց վէճը շարունակեն, մինչեւ մի խելքը  
գիմին մարդ դուրս կը գայ եւ կը որոշէ, թէ  
նրանցից ո՞րն է մեղաւոր եւ որն արդար, իսկ  
մենք գնանք Արութիւնի մօտ:

Արութիւնը հեռացաւ գնաց, սմուտ մի-  
քարայր, եւ սկսեց փորձել, որ տեսնէ կարծդ  
է ածել սազը թէ ոչ: Սպասեցէք, շըւշըւացը  
նում է աշըների եղանակներից եւ ճնկճն-  
կացնում սազը, բայց չի կարողանում ներ-

դաշնակութիւն ձգել բոլոր թելերի մէջ չի  
իմանում, թէ մատը որ փարդի վրայ պէտք  
է դնէ:

— Զէ, չի լինում, Եա սուրբ Կարապետ,

չանգլի սուլթան, չանգլի փեր . . . երգեմ,  
երգեմ, երգելով լաւ դուրս կը գայ . . .

Թորդանէն Եփրատ քերին, Մշու սարին  
հաւանեցար, Բանիւ ջորաւ ծնկովն մեզ զար-  
մանք հրաշք ցուցար . . .

— Զէ, չի ըլում, սուրբ Կարապետը չի  
օգնում . . . ուրիշ երգ երգեմ . . .

Քրիստոնայ էք, անկաջ կալէք, լսեղէք,  
Լաւ իմացէք պատւիրանն Աստուծու,  
Մաթոս, Մարկոս, Ղուկաս, Ուշան գրեցին  
Զօրս կլօս Աւետարանն Աստուծու:

— Զի լինում, չէ . . . վերի սիմերը շատ  
են թուլացել, պէտք է սրանց ոտներին մի քիչ  
հուփ տալ, որ հաստ ձայն չը հանեն . . .

Ահա . . . կտրուեց սիմը. հիմի ես ինչպէս  
շինեմ: Բայց ինչ վնաս ունի, մէկ սիմն էլ  
պակաս լինի թող. միւսը փորձենք: Օհօ . . .  
այս. էլ կտրուեց. բայց այս. ոտի վրայ դեռ

շատ ծկայ. փաթաթւած. տեսնեմ համնում  
էլ. . . Ափո՞ս, կարճ է: Ե՞հ, մի նոր ցաւ  
գտայ ինձ համար, մինչեւ ես որա հետ կը  
հաշուիմ, աչքում մազ կը բռնի, Մէկ ասող

մինի, թէ սաղը քո ինչի՞ն էր պէտք, որ վերացրիր բերիր, խեղճ աշըղին էլ խառաւնց սաղի թողեցիր, Յաղթեցիր, բաւական է, էլ ի՞նչ կանէիր սաղը, ծշմարիտ, ի՞նչ պէտք է անեմ ես էս սաղը. տանեմ էլ յետ իրան տամ, ասեմ, առ, վարպիտ ջան, քո սաղն ինձ պէտք չէ . . . հայց չէ . . . յետ գնալլ լաւ չէ, ով գիտէ ինչ կարօղ է պատահել: Ես գիտեմ ինչ կանեմ այս սաղը: Ես սրան կը տանեմ Զալալօղի կը ծախեմ, ստացած փողովս գնդակ ու վառօդ կառնեմ . . . Խկ Հիմա կերթամ էս մօտիկ փռանգների գեղը: Այս խեղճ կաթովիները չեն իմանում, որ իրանք հայ են, դրանց պէտք է հայտցնել: Հենց որ հասկացրիր, թէ ազգ ասածդ ինչ բան է, էլ այնուհետեւ ի՞նչ պատճառ ունին չը միանալու մեղ հետ: Յիմարները իրանց տունը քանդում են, որ ուրիշ ազգերի տները շինեն . . . Կեր կենամ գնամ . . . Այսօր նշանաւոր օր է ինձ համար . . . Յաղթել: Հեշտ է ասելը: Աշըղին յաղթելը մի պատուհաս է, ամեն մարդի բան չէ: Հայց ինչ կը մինէր իմ ճարը, եթէ դժար դա-

փիով էր մկոել, ինքն առաջուց պատրանտած կը մինէր, ես կը մնայի կապ ընկած: Մէկ դրանց ասող լինի թէ ուլ յիմարներ: Ոտանաւոր էք ուզում գրեցէք, երդ էք ուզում շինեցէք, էլ զափիմս որն է: Մարդ իմանայ, որ ժամանակից է այդ ձեւը մտել մեր մէջ, կամ արդեօք հայի հնարած է, թէ հետեւ ողութիւն է ուրիշ ազգի: Ի հարկէ սա մի հետեւողութիւն կը լինի, հայն այսպէս յիմար բան չէր հնարի: Սա արաբացու բան է, էնդուր էլ աշըղների հին խաղերը բոլորն էլ արաբերէն է . . . Մէկ ինձ ասող լինի, թէ դու ի՞նչ տեղից գիտես. ինչի ես խելքիդ զուտ տալիս, կարելի է թէ վարսերէնն էլ է այդպէս. միթէ քիչ խաղեր կան վարսերէն . . . Զէ, այս ոչ չի իմանալ, եթէ ոչ՝ պարոն Հախվերդեանն էլ կիմանար, որ այս մասին ոչ մի խօսք չի ասել եւ գիտութեամբ թէ անգիտութեամբ լուն է, եթէ ոչ ինչ կը նշանակէ:

« Սայաթ-Նովա գերեզմանն Հինդ, Հաբաշ Արաբ մի անի: Այդ միեւնոյն է, եթէ ասէր: Սայաթ-Նովա գերեզմանն հուն, զրկեռ»

առնաբ մի անի, կամ՝ «ճօն», դերձիկ, դաստի  
մի անի» . . . .

Ով որ աշըղի ղափիի նշանակութիւնը չի  
խմանում, Սայաթնովի սեւ արաբը նրա աչքին  
չի երեւում, կամ կարծում է, թէ բանաս-  
տեղծը դրանով մի մեծ միտք է ուզեցել  
յայտնել, մինչ դեռ նրան՝ ղափիի համար՝  
պէտք է եղել այս վերջաւորութիւնով մի բառ,  
նա էլ գրել է «Արաբը» հինդն ու հարաշն  
էլ առաջից շարել, որ արաբը մենակ չը  
նայ. մեծ մեծ բառեր, մէջը դատարկ . . .  
Աշխարհքում մենակ աշըղները չեն մոլորւած,  
հէնց ամենքն էլ մոլորուած են: Բայց ինչ  
կը նշանակէ մոլորուած. միտին ես եմ մոլո-  
րուած, որ չը գիտեմ, թէ ինչ եմ անում, ինչի  
եմ ման գալիս ու մինչեւ երբ պիտի այսպէս  
աննպատակ թափառեմ. յրինի՞ թէ ճշմարիտ՝  
ես խելագարուած եմ, բայց ինքս չեմ զգում,  
չեմ հասկանում . . . . Գնամ, գնամ այդ-  
գիւղը, կարելի է թէ ինձ այդտեղ վարժա-  
պետ են շինում, եւ ինչ զարմանալու բան  
կը լինի: Եթէ կորցրած էշեր պտրող Սաւուզը  
կարող էր թագաւոր դառնալ, ես ինչու վար-

ժապետ չեմ կարող դառնալ, որ կորած էշեր  
չեմ պտրում, այլ խելքը գլխին մարդիկ: Գը-  
նամ, գնամ, Աստուած ողորմած է, եւ ողոր-  
մած է չափից դուքս, անսահման ողորմած է:  
Նրա համար միեւնոյն է՝ խելք է մարդը թէ  
յիմար, կամ մարդ է, թէ կատու: Նա իր  
ողորմութիւնը հաւասարապէս տարածում է  
քոլոր արարածների վրայ: Եթէ այդպէս  
ըլլինէր, էլ քար քարի վրայ չէր կանգնիլ:  
Բայց ես մոլորուածս՝ ուզում եմ, որ ինձ վրայ  
նա մի առանձին ուշադրութիւն դարձնի. չէ  
որ հարիւր ոչխարի միջից տէրը միայն մոլոր-  
ւածին է փնտրում . . . Բայց այս ասա,  
թէ ես ոչխար հօ չէմ: Եթէ այդ քանը խելքս  
կտրում է, կը նշանակէ Աստուած իր անե-  
մին արդէն արել է» . . .

Առանձնութիւնը եւ վայրենայնում է  
մարդուն եւ փիլիսոփայ է շինում: Արութիւնը  
չէր վայրենանում, նա կարող էր մի նորա-  
տեսակ փիլիսոփայ դառնալ, եթէ թոյլ տար  
նրան իր տաքարիւն խառնւածքը: Նա չա-  
3

փաղանց դիւրագրգիռ, չափաղանց դիւրազ-  
գաց էր փիլիսոփայութեան համար; Նրա-  
բոլոր դատողութեան մէջ փիլիսոփայութեան  
հոտ ու նշան ըլ կար; Նրա բոլոր ուզիղ կամ  
խելօք ասած բաները մի սրտի փղձուկ էին,  
կիրք դարձած զգացողութեան արտայայտու-  
թիւն; Այդպէս էր կազմակերպւած նրա ան-  
հատականութիւնը, նրա հոգու առանձնա-  
յատկութիւնը:

Արութիւնը սազը թաքցրեց քարայրի մէջ,  
իսկ ինքը գնաց մօտակայ փառնգների դիւզը  
Շարչաբետ: Գեղամիջովն անցնելիս մի մարդ-  
տեսաւ, որ տան կտուրի վրայ կանգնած՝ ծը-  
խում էր երկայնակոթ ծխամորճը (չիբուխը):  
Արութիւնը նրան մի քանի անգամ տեսել էր  
իրանց տանն իջեւանած եւ գիտէր որ նա-  
Բարսեղ քեահեան էր, մի պատւական եւ  
հիւրասէր մարդ, որ քառասուն տարի շա-  
րունակ քեահիւթիւն էր արել: Արութիւնը  
մօտեցաւ նրան եւ Բարսեղ քեահեան իսկոյն  
ձանաչեց նրան: Նա չէր իմանում, որ Արու-  
թիւնն իրանց տանից խռոված էր. նստեցրեց  
մօտը եւ հարցրեց թէ «Ի՞նչպէս էր Աւետիք

եղբօր քէցն ու հալլ» եւ երբ խօսք ընկաւ  
Արութիւնի մասին, նա պատասխանեց, որ  
այդ մասին յետոյ կը խօսի նրա հետ:

Արդէն երեկոյեան ժամասացութեան  
ժամանակն էր: Գիւղի ծխատէր քահանան  
գուրս եկաւ տանից, երկայնակոթ չիրուխից  
մի թանձր ծուխ քարձրացներով՝ նայեց արե-  
գակին, տեսաւ որ գեռ կարելի էր մի փոքր  
սպասել, քայլերն ուզգեց գէպի Բարսեղ  
քեահեան: Տէր հայրը գեռ շատ հեռու էր,  
որ Բարսեղ քեահեան ոտքի կանգնեց, մի փոքր  
ուշ՝ նրան հետեւեց եւ Արութիւնը:

Տէր հայրը նստեց նրանց մօտ մի քարի  
վրայ եւ Արութիւնին թուրք հովիս, ուրեմն  
եւ գող, կարծելով, ասաց Բարսեղ քեահեային.

— Զօ Փարսեղ, ասիդ ուրգից է, Քափա-  
նագու չօբան է, հէ . . . , Զօ աղամ, մեզի  
զիան մը չենէ . . .

— Զէ, տէր խայր, խայ է, Խաչնլւայ է . . .

— Խողարձն է, հէ . . .

— Ի՞նչ գըսես գլ, աղեկ կարգալ գինայ,  
մերին Աւագիք ախագօր մանցն էր . . . որպէս  
ախագօր, որպէս փանուրաց վազոյ լի

— Ըղւրտ գըսես գը. Ճօ մանչիկս, ուր  
կերթաս գը . . .

— Ես այստեղ եմ եկել, տէր հայր, ու-  
րիշ տեղ չեմ գնալու: Ես լսել եմ, որ դուք  
ուզում էք ուսումնարան բանալ ձեր գիւ-  
ղումը, բայց վարժապետ չունիք: Ես կարող  
եմ վարժապետ լինել, եթէ կը կամենաք եւ  
կընդունիք:

— Աղանդ իշտէ . . . Եզնելու պան մը  
քսի՞ր . . .

— Ինչու համար.

— Քուգին միտքն ի՞նդոր է, դու խայ  
ես մենք գաթօլիկ, ագիտ ի՞նչ ըսել է. «Ե-  
գուր քըզի խայ ընեմ» դէյի ըսել չէ մի . . .  
ֆիռանգին ու խային մէջ միապանուտէն  
կեղնի՛ հէց:

— Ինչպէս թէ՝ «Եգուր խայ ընեմ քզի».  
Միթէ դուք հայ չէք, նո՞ր պիտի հայացնեմ  
ես ձեզ. դուք որ ձեր անունը փռանկ էք  
գրել, հենց իմանում էք թէ փռանդսուզ էք  
դառնել. ո՞ր փռանդսուզ կը յիմարանայ՝ իր  
աղգութիւնը չըճանաչել եւ իր աղգային կրօնը  
մի օտար կրօնի հողաթափ շինել: Վերջապէս

ես կրօնի վարժապետ չեմ, ձեր կրօնը դուք  
ինքներդ էլ կարող էք սովորեցնել: Բայց եթէ  
դուք ձեր աղգութիւնը չէք ուրանալ, ազգու-  
րաց չէք լինիլ, ես կը սովորցնեմ ձեր որդւոցը.  
Հայոց աղգի պատմութիւնը: Գիտութիւն էլ,  
որքան ես ունիմ, բոլորն էլ կը հաղորդեմ  
նրանց դիւրին ոճով. վերջապէս ուսում կը-  
տամ, գրել կարգալ կը սովորցնեմ . . .

— Խայոց բատմուտէն որի՞ն գըսես գը.  
Խին գուաբաշտներու խմար գըսես գը.

— Այո՛, հին կուապաշտների, բայց որոնք  
աւելի առաքինի, աւելի հայրենասէր եւ աղ-  
նիւ մարդկիկ են եղել, քան թէ այժմեան հա-  
յերից շատերը, որոնք թէպէտ կուապաշտ  
չեն, բայց պապապաշտ են, որ կուապաշտու-  
թիւնից էլ ստոր բան է: Վերջապէս հին հա-  
յերը հօ միշտ կուապաշտ չեն եղել, Մեր Սբ-  
դար թագաւորի ժամանակից սկսած հայերը  
խաչապաշտ դարձան Թագէոս եւ Բարթողի-  
մէոս առաքեաների քարոզութեամբ եւ վերջը  
Սուրբ Գրիգոր Լուսաւորչի: Ես այդ բոլորը  
կը պատմեմ: Ես այն էլ կը պատմեմ, թէ ի՞նչ  
պատճառներից, ի՞նչ հանգամանկներից ստպի-

պւած՝ եւ որպիսի որունացանների շնորհիւ  
մի եւ նոյն աղգի, մի եւ նոյն եկեղեցու հաւ-  
րազատ որդիքը բաժանւել են միմեանցից եւ  
պէմ իրար խորթ եղբայր անգամ չեն հա-  
մարում եւ փոխադարձաբար իրար աւելի են  
ատում քան մի բոլորովին օտար եւ մինչեւ  
անգամ չըրիստոնեայ աղգի։ Այս բոլէիս  
գուք ամօթ էք համարում եւ մինչեւ անգամ  
մեղք՝ ձեղ հայ անւանելու եւ չեք զգում, որ  
դա մի հայրուրացութիւն է . . .

Տէրտէրը նկատեց, որ Արութիւնը վը-  
տանգաւոր քարոզիչ չէ, որովհետեւ գիծ է,  
ուշ չը դարձրեց այլ եւս նրա խօսքերին եւ  
մի աւելի խոչեմ մարդու գիրք բռնելով՝ վեր  
կացաւ գնաց ժոմ։

Բարսեղ քեահեան Արութիւնին տարաւ իր  
տուն, ուր ներս մտան թէ չէ՝ աղջկէքն ու  
հարմները տանուատիրոջ ակնարկութեամբ համ-  
բուրեցին Արութիւնի ձեռքը, կատարելով ի-  
րանց հիւրատիրական սովորութիւնը։  
Ընթրիքից յետոյ Արութիւնը՝ բարկացած  
մնելով տէրտէրի վրայ՝ սկսեց հայ կաթոլիկ-  
ների մոլորութեան դէմ շատ բաներ առել եւ

քարոզել բարսեղ քեահեային աղգութիւն։  
Բարսեղ քեահեան, որ մոլեռանդ մարդ էք եւ  
սերոտ բարեկամութիւն ունէր շատ լուսաւոր-  
շականների հետ, համակրում էր Արութիւնի  
բոլոր ասածներին՝ տաքարիւնութեան վերա-  
գրելով նրա համարձակութիւնը քան թէ գը-  
ժութեան, բայց ոչինչ չասեց, բացի այս մի  
խօսքից, թէ՝

— Քուգին ըսածը բիութիւն ջշմարտու-  
տէն է մա՝ ինչ պիտ էնէս օր՝ գարբաւորնիս  
առաջնիս կրփագեն գը, իշտէ, ինքդ ալ գը-  
գեսնես գը . . .

Արութիւնը մոլքումը դրաւ, որ էլ այ-  
նուհետեւ ոչ ոքի չը յայտնէ որ ինքն այբբեն  
գիտէ։ Լաւ համարեց, որ իրան մի չօրան  
կամ աւազակ կարծեն, քան թէ գիծ կար-  
գացող։ Բայց այսուամենայնիւ նա զգաց, որ  
ինքը մի նոր միտք քարոզելու կերպն ու ձեւը  
չը գիտէ։ Նա ոչ տեսել էր եւ ոչ լսել, թէ  
ինչպէս են վարում և ինչպիսի ոճով խո-  
սում նոր միտք, նոր ուսմունք վարդապե-  
տողները. գիտենար էլ՝ գարձեալ չէր նմանիլ  
նրանց՝ հակառակ լինելով այդպիսիներին թէ

համոզմամբ եւ թէ բնաւորութեամբ։ Նա մի ցերմեռանդ Աստւածասէր էր։ Նա Աստուածուն ներկայացնում էր իրան նարեկացու պէս, անսահման բարի, անսահման ողորմած, եւ ոչ նախանձոտ, բարկացկոտ, ինչպէս Մովսէսն էր ներկայացնում։ Բայց շատ էր ցանկանում, որ Աստւած նախանձոտ եւ բարկացկոտ լինէր, վրէժինդիր լինէր, իր փառքնուրիշին չը տար. սակայն խոր մտածելով՝ ասում էր, «Եթէ այդպէս լինէր, քար բարի վերայ չէր կանգնիլ»։ Նրա բնաւորութիւնն այնպէս էր կազմակերպւած, որ ինչ բովով էլ անցնելու լինէր նրա ուղեղը, նա կը մնար մի ջերմեռանդ աստւածապաշտ։ Աստւած նրա ամենաբարի Հայրն էր, առանց նրան ինքը զինքը որբ կըզգար, զուրկ այն անսահման սիրուց, որ խոր զգացողին մի անմահական կեանք է տալիս, նրա երեւակայութեամնը մի արագ սլացումն դէսի վեր, վեր, դէսի անհունութեան ծայրի աշխարհը, «զոր ակն ոչ ետես, ունկն ոչ լրւաւ եւ սիրտ մարդոյ չ'չ անկաւ»։ Զգացող սիրտը, երեւակայող միտքը մնունդ է պահանջում; մնունդ է լինորում

եւ գտնում է միշտ՝ յիրաւի՝ այնպիսի բաներ, որ ոչ աչքը կարող է տեսնել, եւ ոչ ականջը լսել . . .

Առաւօտուն վաղ վեր կացաւ Արութիւնը եւ մի տաք տաք թանէսպաս խըպըշտելուց յետոյ, ճանապարհ ընկաւ դէսի Զալալօղի։ Այդ տեղ ծախեց նա իր ձեռք բերած սազը եւ նրա գնով բաւական գնդակ ու վառօդ գնեց եւ ընկաւ Լոււա ձորերը։ Բայց ինչու համար, ինչ նպատակով, ինչից ստիպւած, այդ հարցմունքները նա ինքն իրան չէր առաջարկում, բայց կարծես մարդկանցից, աշխարհքից վախչել էր ուզում եւ միայնութեան մէջ էր գտնում իր միտք միմիթարութիւնը, զըւարձութիւնը։ Իւրաքանչիւր քայլափոխում նա իր ուշադրութիւնը գրաւող մի բան էր տեսնում, եւ այսպիսով նրա միտքն ու երեւակայութիւնը անընդհատ զբաղուած էր լինում, մանաւանդ երբ մի որսի հետք էր գտնում եւ սկսում էր նրա հետքով գնալու Որսի հետքը նրան անց էր կացնում բաւական մեծ

տարտածութիւն, առանց յոգնեցնելու, մինչեւ  
որ կամ գտնում, սպանում էր, կամ հետքը  
կորցնում եւ մի ուրիշը վնտրում։ Որսորդու-  
թիւնը մի զարմանալի գրաւող բան է, որ  
շատերի մէջ հարբեցութեան եւ թղթամոլու-  
թեան պէս մի բան է գառնում, էլ ձեռք  
վերցնելու հնար չի ունենում։ Արութիւնի  
երակները արիւնով լցուել էին, նրա մըկա-  
նունքները զարգացել, նա շարժունութեան  
կարիք էր զգում։ Այսպէս մենակ մի քանի  
օր թափառելուց յետոյ, մէկ օր էլ Մարցայ  
անտառներումը հանդիպեց արտաքին կերպա-  
րանքով իր նման մի որսորդի, կամեցաւ մօ-  
տենալ նրան, բայց անձանօթը հրացանը  
Արութիւնի դէմ բանելով՝ ասաց.

Քի՞մ սան, եախըն գեալմա (ո՞վ ես  
մօտ մի գար)։

Արութիւնին որսորդների զգուշութիւնը  
յայտնի էր. անձանօթի հայի կերպարանըը  
տեսնելով՝ ասաց.  
— Ես թուրք հօ չեմ, ի՞նչ ես թըւանքըդ,  
դէմ անում վրէս, ես հորսկան տղայ եմ,  
հորսի եմ մանգալիս . . .

— Հա ա՞ . . . դէ որ հայ քրքիստոնա  
ես, լաւ ա մաս . . . Որդիանցի ես, անումդ ի՞նչ  
ա, — հարցըց անձանօթը մօտենալով Արու-  
թիւնին ունալ, զայի ունալ անումդ ունալ . . .  
— Խազընեցի եմ, անումն Արութիւն ա,  
գո՞ւ սրդիանցի ես, քու անումն ի՞նչ ա . . .  
— Ես էլ Դսեղեցի եմ, անումըս Պօղոս ա  
Մի քանի այսպիսի լակոնական հարց ու  
սպատական իրար տալուց յետոյ մեր հայ  
սպարտացիքը մօտեցան միմեանց եւ նատեցան  
իրար կազի, որ հանգստանան։  
Պօղոսն Արութիւնի կատարեալ հակա-  
պատկերն էր. նա մի մարմնացեալ կոպտու-  
թիւն էր՝ գազանի բնաւորութեամբ, բոլոր  
զգացումները գազանային էին. նրա ապշու-  
թիւնը, զարմանքը, բացականցութիւնը, բար-  
կութիւնը, ոգեւորութիւնը բոլորը բոլորը  
գազանային էին, ինելքի կառավարութիւն,  
տիրապետութիւն չը կար նրա զգացմանքների  
վրայ, իայց այսու ամենայիւ, իբրեւ ընկեր  
շատ լաւ ընկեր էր, որովհետեւ սրառու էր,  
զատ լաւ ընկեր էր, որովհետեւ սրառու էր,

ընկած։ Երբ որ տեսաւ, որ Արութիւնը մի օտարական է, առաջարկեց նրան իր մօտ գնալ, իր տանը մնալ որքան կամենում է եւ իր հետ գնալ որսի։ Արութիւնը յանձն առաւ եւ տուն վերադառնալիս մի եղնիկ սպանեց, որով ցոյց տւաւ Պօղոսին իր ճարպիկութիւնը եւ բարձրացրեց նրա աչքումն իր հեղինակութիւնը, որովհետեւ գնդակը դիպցրել էր եղնիկի ճակատի ուղիղ մէջ տեղը, որ ամեն որս որդի բան չէր . . .

Արութիւնը Պօղոսի հետ ընկերութիւն արաւ մի քանի ամիս։ Թէ ինչից գրաւած՝ այդքան մնաց, այդ հանդամանքն ուրիշ բանի կարելի չէ վերագրել, այլ միայն որսամոլութեան։ Մի քանի տեղ թակարդ էին լարում ձմեռ ժամանակ, եւ սպասում էին, որ նրանց մէջ պիտի ընկնին մազաւոր կենդանիք — աղւէս, դալա, լիսամ եւ մինչեւ անդամ գայլ։ Խրամների անմատչելի քարածերպերում փեթակ էին գնում եւ սպասում էին, որ նրանց մէջ պիտի մտնեն տանը ձագ տւած փախած մեղուները։ Նրանց գնալ՝ մտիկ տալ կուզէր, եւ գնում մտիկ էին տալիս, որ եթէ

յաջողւած էր լինում, վեր էին առնում տանում տուն, իսկ եթէ ոչ ընկնում էին որսի ետեւից երբեմն միասին եւ երբեմն ջոկ ջոկ։ Պօղոսն անտառի մարդ էր, որովհետեւ որսորդութիւնը չէր, այլ արհեստ։ Նրա բոլոր հարստութիւնն էր իր մի հատիկ կովը, երեք հատ գամփռ շները, որոնցով շատ անգամ արջ եւ վարագ էին որսում, եւ երեսուն թէ քառասուն փեթակ մեղուն։ Նա չունէր ոչ հայր, ոչ քոյր եւ ոչ եղբայր, այլ մի մայր միայն, որ մի կատարեալ կմախք էր։ Այդ չորսութիւնը առաջ էր եկել կակծից։ Վեց որդի էր թաղել մին քան զմիւսը գեղեցիկ եւ քաջ, ամենքն էլ մեռել էին որը նոր նշանած, որը նոր պակւած։ Նա ամեն երեկոյ նախատում էր Պօղոսին, որ ձեռք վերցնէ որսորդութիւնից, վար ու ցանք անէ, տաւար պահէ, բայց գազանաբարոյ Պօղոսը սիրով պատասխանել կամ խոստումներով սիրաշահել չունէր, այլ խանչալով էր խօսում մօր հետ, ասելով՝

— Լեզւիդ մ'անիլ, թէ չէնա՝ էս սհա-

թիս վարչափարա կանեմ։ Բայդուշ, հօրըս  
գլուխը կերար, ախազօրցո գլուխը կերար՝ հե-  
րիք չի, հիմի էլ իմ գլուխն ես ուզում ու-  
տի՞ . . .

Կոկաչոր մայրը վախենալուց՝ ցածրա-  
ցնում էր ձայնը եւ ոգում։ Արութիւնի սիր-  
տը թէ եւ արիւնով լցում էր ամեն անգամ  
այս տեսարանին ներկայ լինելով՝ բայց ոչինչ  
չէր խօսում, չէր յանդիմանում Պօղոսին, որ  
ըստ երեսութիւն անգթութեամ մէջ նրանից  
յետ ըլմնար։ Սակայն առանձին եղած ժամա-  
նակ միշտ մխիթարում էր պառաւին եւ յոյս  
էր տալիս, որ Պօղոսը կը լուանայ, միշտ էն-  
պէս կոպիտ չի մնալ։ Պառաւն էլ Արութիւ-  
նին համարելով իւր միակ մխիթարիչը, Պօ-  
ղոսից առաւել նրան էր մայրութիւն անում։  
Սակայն մէկ օր էլ, երբ Պօղոսն իր կոստու-  
թիւնը ծայրայեղութեան հասցրեց, եւ մայրն  
սկսեց երեխայի պէս հեկեկալով լաց լինիլ,  
Արութիւնի սրտի վրդովմունքն այնքան սաստ-  
կացաւ որ աչքերից արտասուք եկաւ։ Չուղե-  
նալով Պօղոսին ցոյց տալ իր սրտի քնքու-  
թիւնը, դուրս եկաւ տանից եւ արտասունքն

աչքերին նստեց մէկ տեղ եւ արտայայտեց իր  
սրտի վիշտը հետագայ խօսքերով—  
Արցունքն աչքերին, կարկառած ձեռքով՝  
մօրծուեմ տեսնում,  
թէ երազիս մէջ թէ լոյս ցերեկով, մը-  
տածմանց միջում,  
Ո՛չ, մայր իմ, մայր իմ, միթէ արժեմ  
նոյն այդ կոկանքին,  
ոյդ անչափ սիրոյն եւ երանական պատ-  
ճառ ըստ գգւանկին,  
Ես չեմ ուրեմն մի դժբախտ էակ մոռց-  
իլ նաև այս ամենքից,  
Քանի որ ունիմ անսահման սիրով ինձ  
վիճակակից։  
Թող ողջ աշխարհը ինձ արհամարհէ,  
հոգ սոցու աշխարհին։ Հոգ չունիմ բնաւ,  
ինձ բաւական է քո միակ սէրը եւ  
գութը անբաւ գութը, անբաւ գութը գութը անբաւ։  
Ո՛չ թէ ինչ յուսով եւ ինչ փափաքով  
ինձ մնուցել ես,  
Քանի օրերով ծոմսպահութեամբ կեան-  
քը մաշել ես,

Քանի՛ շաբաթներ պասով, աղօթքով  
 Աստւած ես կանչել,  
 Քանի՛ սուրբի մօտ մոմով, մատաղով  
 ուխտ ես գնացել,  
 Քանի՛ որբերի եւ աղքատների դու կե-  
 րակրել ես,  
 Քանի՛ աղօթքներ եւ թիլսմաններ վե-  
 րաս կարել ես,  
 Քանի՛ ցըս անգամ դու իմ փոխանակ  
 հարւած ես ստացել  
 Անգութի ձեռքից եւ քանիցս անգամ  
 դառն արցունք թափել,  
 Որ ես բախտաւոր մարդ դառնամ մի  
 քր եւ շնորհալի,  
 Որ լինիմ պարծանք ազգակիցներիս եւ  
 քեզ սիրելի,  
 Բայց ես . . . մթնապաշտ հօրըս շնոր-  
 հիւ ընկայ սարէ սար,  
 Վերադառնալու, նորից ապրելու փընտ-  
 րում եմ հնար.  
 Բայց իմ յոյսն արդեօք Աստուած . . .

\* \* \*

Ո՞վ . . . Աստւած իմ, Աստւած, Դու  
 բարի ես, Դու միշտ ողորմած.  
 Եատ ժամանակ է, որ Քո գլխութիւնդ  
 երբէք չեմ յիշած.  
 Ներիլ ինձ, ներիլ, Հայր իմ Արարիչ,  
 ես մեղաւոր եմ,  
 Դու ինձ շնորհել ես ուժ ու զօրութիւն,  
 ես մոռացել եմ,  
 Դու հրամայել ես լինել գործունեայ, ես  
 նոր եմ յիշում,  
 Ես այսուհետեւ գործող կը դառնամ իմ  
 բոլոր կեանքում.  
 Գործունէութեամբ իմ մէջ կրգտնեմ ես  
 ինձ բարերար,  
 Գործունէութեամ դէմ չը կայ ոչինչ ան-  
 հաս եւ դժւար.  
 Թողայս ձեռներըս, որ այժմ քաջա-  
 ռողջ՝ պարապեն գործով,  
 Թող այս ճակատը, որ այժմ լայնացած՝  
 ճոխանայ մաղքով,  
 Թող այս ոտներս, որ այժմ ամրացած՝  
 ուղիղ ընթանան

Թող այս աչքերը, որ այժմ բացւած  
նոր փայլ ստանան.  
Յօժար եմ, յօժար, ամենայն անձամբ  
գործունեայ լինել,  
Հաստատուն յուսով, անվեհեր սրտով  
միշտ յառաջ դիմել,  
Դէսի նպատակ—դէսի կատարեան եւ  
գէպի բարին,  
Որին ձգտելը մի անհրաժեշտ պարոք է  
մարդկային . . .  
Դու մի հաստատուն, ով իմ Արարիզ,  
կամք տուր ինձ միայն,  
Խոկ քեզ վայել է միայն վառք սպատիւ  
այժմ եւ յակիտեան . . .

Մէկ անգամ Սրութիւնն ուղարկութիւնն է Պօղոսը  
մի եղջերու սպանեցին, երկուքի գնդակն եւս  
դիպել էր: Արդէն երեկոյ էր եւ տունը հեռու  
եւ իրանք էլ յոգնած, այս պատճառով  
նոյն գիշերը մնացին մի առերակ եկեղեցում:  
Արակ վառեցին եկեղեցու մէջ տեղը եւ սկսեցին եղջերուի մսի փափուկ տեղերից փայտէ

շամփուրներով խորովիել, ուտել եւ մի եւ նոյն  
ժամանակ խօսել որսորդութեամ, այս եւ այս  
վայրենի կենդանու բնաւորութեան մասին, թէ  
ինչպէս որձ եղջերուները սեպտեմբերից սկսած  
տալով գրմբացնում են բոլոր անտառ-  
ները եւ կանչում են կովերին, թէ ինչպէս  
կատաղութիւնից կուրանում, անխելքանում  
են, թէ ինչ կատաղի կոփւ է սկսում բոլոր  
որձերի մէջ եւ կովերն ընկնում են յաղթողի  
ճանկը: Սրանց այս տեսակ նկարագրութիւնից  
երեւում էր, որ որսորդները թէ եւ կոպիտ,  
խիստ նուրբ կերպով ուսումնասիրում են  
վայրենի կենդանիների ամեն մի շարժումը,  
նրանց բնաւորութիւնը:—Այս ժամանակները,  
ասում էր Պօղոսը, որ աւելի փորձած էր  
այդ բանում քան թէ Սրութիւնը, բոլոր որ-  
ձերը գնդակահար կը լինին, եթէ կովերը չա-  
գատեն նրանց: Որձերի աշքերը արիւնով լցւած  
է լինում ոչինչ չեն տեսնում, բայց կովերն  
ինում ոչինչ չեն տեսնում, իմաց են տալիս վերա-  
խսկոյն նրանց քաւելով, իմաց են տալիս վերա-

հասցնում էր մինչեւ աղջկէքը, որոնք նոյն քան դգոյշ են, ինչքան վայրենի պախրի երինջները, եւ խօսում էին այս եւ այն աղջկան վերայ:

Լսենք տեսնենք ինչ են խօսում մեր քաջ Հայկայ թոռնիկները:

— Արութին, ասում են՝ պախրայ սպանիլը մեղք ա. զորդ ա, էս միսն ուտում եմ, ամմա սիրոս ասում ա՝ լաւ չես արել . . .

«Ամենայն տեղ նախապաշարմունք» ասում է Արութիւնն ինքն իրան բայց ըլմգիւ տելը գնելով՝ հարցնում է.

— Ընչի՞ ա մեղք, Պօղոս.

— Ասում են Քարամն անըծել ա:

— Հա . . . դէ հըմի վժնց անենք, սպանել ենք պրծել, էլ հօ չի սաղանալ: Ես շատ եմ սպանել, Պօղոս, իսկի մեղքս չի եկել . . .

— Տօ ես քիչ եմ սպանել . . . Որ գամս ա գիւղիդ աղաքին կաղնում, Քարամն էլ ես մոռանում, քանն էլ. Հենց որ սպանում ես պրծնում, նոր ա Քարամի անէծքը միտքը ընկնում . . . , միջնազ ծաղա՛ բյան ո մասնարան ունենալու աղամասուս բասմ ավ

— Պօղոս, ես էդ Քարամի անէծքը գիւնեմ . . . . իւնչ ա ասում . . . , Քէ մատաղ, Արութին ջան, հլա մի ասա տեսնեմ իւնչ ա ասել: — Ասել ա՝ Սափար այլն օնդօրթընդա, բէշնդա Բու դաղդա բիր մարալ սըզդար, աղար, լզ Ուզախ դայիլ, բու դըր Բին-գեօլ բաշընդա, Բու դաղդա բիր մարալ ախ էդար, աղար . . . Քէ մատաղ, Արութին ջան, մի ձէնով ասա, ձէնով . . .

— Դէ անկաջ դիր. Օչի՝ գեօրգմ՝ զուռիաթընի արթմասըն, պահիրիգ զօյուփ քիփրիգ ուստա չաթմասըն . . . լ՛ . . . լ՛ . . . լ՛ . . .

Ղասաբ օլան մարալ աթի սաթմասըն, Բու դաղդա բիր մարալ սըզդար, աղամ . . . ա . . . ա . . . ար . . . ա . . . էյ . . . եարալի ջանը . . . լ՛ . . . լ՛ . . . լ՛ . . . ախ . . . աղիզը . . . լ՛ . . . լ՛ . . . լ՛ . . . բահ, ձէնիդ մատաղ, Արութին, լար ցըս էկաւ . . . Եանի էլ ընչի էր անըծում էդ օրհնւածը . . .

Քարամը Ասլու ետեւից գնալիս՝ թեր որ  
հասել ա Մին—գեօլի սարը, ընտեղ տեսել ա  
մի եարալու (վիրաւորւած) պախրակով հոր-  
թերը կշտին տիսուր տրասում կանգնած։ Եդ  
բանը Քարամի սրտին շատ գիտել ա, ինքն էլ  
նստել ա նրանց կշտին ու նրանց սուգն ա-  
րել, և լույս բացառ արդյուն յաջան զիյ արրար ա-  
սրութին, ես եդ Քարամի անումն իմացել  
եմ, տմմա իսկի չեմ գիտում, թէ գա ով ա  
ըլել, ինչ ա ըլել։ Դու եդ էլ կը գիտենաս, ա

— Անկաջ դիր ես .քեզ ասեմ. Միտէր  
տէր ու մէկ մալլա են ըլեւ, Երկուան էլ Երեւ  
խայ չեն ունեցել. Սրանք մէկ մէկու խօսք  
են տուել, որ թէ իրանց Երեխայ ըլի, ու  
մէկին տղայ, մէկէվնը աղջիկ, նրանք իրար  
ուղեն. Պատահում առ տէրտէրին աղջիկ  
ա ըլում, մոլլին՝ տղայ. Աղջկայ անունը գը-  
նում են. Ալլի, տղի անումը՝ Քեարամի. Ոլ որ  
տարով կը մեծանայ, արտնք օրով են. մեծա-  
նում. Ժամանակը առաջ համնում ա, մօլլին  
գնում առ տէրտէրի մօտ ոգ աղջիկն ոգի,  
տէրտէրը նրան խօսք ա տալիս ճանփռա գը-

նում, յետոյ ինքն աղջկը վեր ա կալնում  
փախում: Մօլէն էգ չի իմանում, տղին ու-  
զարկում ա, թէ դէ՝ գնա նշանածդ վեր կալ  
բեր: Քարամը գնում ա տէրտէրի տունը,  
տեսմում ա որ ոչ տէրտէր կայ, ոչ Ապի: Եդ-  
որ իմանում ա, զունուն ա դառնում, աղջը-  
կայ էշխաւ սիրով վառւում ա, աշըդ դառ-  
նում, ընկնում նրանց ետելիցը: Ճանապար-  
հին ինչ որ պատահում ա, մարդ, ծառ,  
ջռւր, անձրեւ, ձիւն, քար, սար, ամենքին էլ  
խազով հարցնում ա, թէ իր Ապին չեն տե-  
սել . . . Ոմենքն էլ նրան պատասխան են  
տեղիս, ու տեղը նշանց տալիս, մենակ մի չի-  
տալիս, ու տեղը նշանց տալիս, մենակ մի չի-  
տալիս: Քեարամը խաղավ նորան անիծում ա, Մէկ էլ  
չինտքին էն սահաթին չրանում ա: Մէկ էլ  
մի քեալլա ա պատահում, մեռած մարդու  
մի չոր գլուխ, սարնըլլը գլոր ելիս ա ըլում:  
Քարամը խաղավ կաղնացնում ա նրան, «Կաղ-  
նիր, ասում ա, դու մարդու գլուխ ես, դա-  
հա լաւ կիմանաս, ուր ա գնացել իմ Ապին»:  
Քեալլէն ասում ա՝ դու կը գտնես նրան, ամ-  
եալլա մուրաղիդ չես հասնիլ, դու կէրւես, կը

փոթոթւես . . . ասմա՝ «Եանըշ Քեարամ, թու-  
թուշ Քեարամ, եան, Քեարամ» . . . Վերջը,  
Էլ ինչ գլուխդ ցաւացնեմ, գթնում ա Առ-  
ուն: Սրանք իրար որ տեսնում են, աւելի են  
գիտում մէկ մէկու սիրով: Ասլին Էլ Քեարա-  
մին ա ուզում: մի սաղ Էլ նա ա ձեռքն  
առնում; իրա սէրը խաղով իմաց տալիս Քեա-  
րամին: Տէրտէրը որ տեսնում ա Էլ ճար ըլ-  
կայ, Քեարամին ասում ա. «Թէ որ դու քու  
խաղերովը բաց կանես իմ աղջըկայ կուրծքի  
մէր տւած արծաթէ կօճակնին, ես նրան  
քեզ կը տամ» . . . Քեարամը խօսք ա տալիս,  
սաղն առնում ա, չոքում ա աղջըկայ առա-  
ջին: Տէր Աստած, ինչեր ա ասում, ինչեր,  
ինչեր . . . կօճակնին սկսում են բացվիր,  
հէնց որ մնում ա մէկը, էն Էլ ուզում ա-  
թէ բացւի, մէկէլ ծէրիցը մէկէլ կօճակնին  
Էլի մէր են ընկնում, կօճկում են . . . էս-  
պէս՝ խեղճ Քեարամը մի կողմից բաց ա ա-  
նում իրան խաղովը, մէկ Էլ կողմից կօճակ-  
նին մէր են ընկնում, չունքի տէրտէրը թըլի-  
սիմ ա ըլում արած, որ ըլ բացւին: Էսպէս  
խեղճ Քեարամը ասում ա, ասում, ասում,

ասում, մէկ Էլ սազը կրակ ա ընկնում վառ-  
ում, էդ կրակը դիաչում ա իրան, ինքն Էլ  
ա սկսում էրւիլ: Ասլին ուզում ա թէ  
հանգնի, կշտին մի փարչ ա ըլում, վրայ ա  
բերում ածում վրէն, հէնց իմանում ա թէ  
ջուր ա, դու մի ասիլ նօթա: . . . էդ նօթն Էլ  
որ վրէն չի ածում, խեղճ քեարամը տեղն ու  
տեղը էրվում ա, դառնում մի անձակոթու-  
նրան տանում են թաղում: Ասլին Էլ չի հե-  
ռանում նրա գերեզմանիցը: Սազը ձեռին  
էնքան ածում ա, սգում, լաց ընում, որ մէկ  
օր Էլ գերեզմանիցը կրակ ա դուս գալիս  
նրան Էլ էնտեղ էրտմ: . . . նրանց գերեզ-  
մանի վրայ յետոյ էրկու վարդի թփեր են  
բանում, էրկուսի մէջ տեղն Էլ մի փշի ծառ:  
Վարդերն իրանց ճները մեկնում են, որ ի-  
րար վաթաթւին, մէջ տեղի փշի ծառը չի  
ժողնում: . . .

Կոպիտ Պօղոսի սիրտն այնքան քնքշայաւ-  
այդ պատմութիւնից, որ աչքերն արտասուքով  
լցւեցան:

— Խեղճերն իրանց մուրազին չեն հասել,  
վերջն Էլ էրւել են . . . Արութին, Էրնէկ

ասած շրլէիր, սրտումըս դարդ դառաւ։  
— Դու շատ անխելք ես Պօղոս։  
Այս, էդ դրուստ էլած բան խօմ չի, էդ  
հեքեաթ ա, մօգոնած բան ա, մարդը վճնց  
կէրւի, մեռած մարդու դլուխը, եա ծառը,  
քարք վճնց կը խօսին . . .  
— Ի՞նչ ա ասում . . . Ամմա ի՞նչ զար  
լում տէրտէր ա ըլել, աղջիկը թաւրի չի  
տաել . . . Զէ, որ մօգոնովի բան ա, էլ ես  
նրա անքծին չեմ հաւատուր, Ախըր էդ  
թռւրքերը հորսկանութիւն անելու շնորհը չու-  
նեն, էնդուր ա անքծել հորսկաններին . . .  
Ուզեցել ա հայի աղջիկ առնի, էն էլ տէր-  
տէրի . . . Խսկի մեր տէրտէրն իրա աղջիկը  
ինձ չի տալիս, ասում ա՝ ես հորսկանին աղջիկ  
չեմ տալ . . . Ես հիմի կը տեսնեմ, թէ վճնց  
չի տալ։ Ես Քեարամի նման աշրդ չեմ դար-  
նալ, որ ասի՝ արի աղջկանս կօճակնին բաց  
արա, մի գիշեր վեր կառնեմ ու հայդէ . . .  
Պօղոս, էդ ժողենք, խօսքը կորեց  
Արութիւնը, Ես քեզ հետ խօսալու բան շատ  
ունեմ, տեղը չի եկել, որ ասեմ։ Պու լաւ  
տղայ ես, քու սիրտը չար չի, ամմա շատ ես

անտաշ։ Ադա, մօրսդ խաթրն ինչի՞ չես պառ  
հում. պառաւ կնիկ ա, կակծից էրւած, խոր  
ըռվւած . . .  
Արութիւնը, որ ծածկել էր մի կեղծ  
դիմակով, ու խօսում էր դասում էր Պօ-  
ղոփի հայեացքով, այժմ սկսել էր իր դիմակը  
յետ քաշել, որովհետեւ էլ միտք չունէր նրա  
հետ ընկերութիւն անելու։ Մի կողմից իր  
առաջւան վիճակը, միւս կողմից իր մօր կա-  
րութը աներեւութապէս քարշում, տանում  
էին Արութիւնին, որի մէջ վառ ու պայծառ  
լինելով սիրոյ զգացմանքը, չէր կարգանում  
կարծրացնել մի այնպիսի սիրտ, որ ի բնէ  
չէր ստեղծւած կարծր լինելու . . . Արու-  
թիւնի առաջարկաւթիւնը՝ մօր վերաբերու-  
թեամբ, Պօղոսի սիրտը բնաւ չը շարժեց, այդ  
զգացմունքը նրա համար մի խարթ բան էր, ոչ  
զգակի էր, ոչ էլ հասկանալի . . .  
— Բա՛, նրա քաւթառ իմանը . . . պառ  
տասխանեց Պօղոսը։ — Տօ. մի թող կորչի, բան  
չունես։ Պառաւ մարդ հօ չես, որ իրաւ ես  
տալիս . . . Արութիւն, հւա ինձ անկաջ դի . . .  
Ես խաչընեցոց անումը իմ պապերիցն եմ

լսել . . . թէ որ դու նրանցից ես, հունաց  
ըլդ նշանց տուր . . .

— ի՞նչ ես ասում, ի՞նչ ես ուզում առ  
նես . . .

— ի՞նձ քօմագ արա, Արութին ջան . . .

— ի՞նչ ա, ուզում ես տէրտէրի աղջը-  
կանը փախցնես . . .

— ի՞նձ հետ արի, քու արեւին դուրբան,  
Արութին . . .

— Զեմ գալ, ես դաւի չունիմ, ի՞նչ ուզում  
ես, արա . . .

— Հըմ . . . չես գալ հա . . . Են տղի  
հէրն անիծած, ով քեզ չսպանի . . . մի գալ  
. . . էլ ձեր տան երեսը չես տեսնի լ . . .

— Եյ, լոււայ արջ, բերանըդ քեզ պահի  
թէ չէ՝ տեսնում եմ էս խանչալը. սրանով իմ

հէրը շատ զզլբաշի գլուխ ա կտրել, հիմի էլ  
իմ ձեռքն ա ընկել . . . Ախմախ, տէրտէրը

քեզ համար ա աղջիկ պահել, որ դու քաշ  
տաս չօլէ չօլ գցե՞ն . . . թէ որ նա քեզ

սիրում ա, ի՞նչի՞ էն օրը ջրի ճամփին քեզ  
քիաբուռ արաւ, թէ՝ «խնչեմ վրէդ, դու ո՞վ  
ես, որ քեզ ուզեմ» . . . Քու տունը ծակւի

ոչ, մարդը մարդ ա, խոզը՝ խոզ արջն՝ արջ:  
Ես էնքան հորսկաններ եմ տեսել, որ քու  
գլխի մազի համբարքովը մին: Նրանք որ  
մարդամէջ են մտնում, ոչով չի իմանում, որ  
քոյի մարդիկ են, ամմա դու ամեն տեղ էլ  
քու արջութիւնը նշանց ես տալիս: Ախըր ես  
քեզ ի՞նչ եմ ասում, գու ինձ ի՞նչ: Մօրըդ  
հետ ի՞նչի՞ ես խանչալով խօսում, այ, ես քեզ  
ի՞նչ եմ հարցնում . . .

— Դէ որ ըտէնց ա ըտէնց, իմ աղ ու  
հացը քու աչքերը քօռացնի . . .

— Ես քու աղ ու հացը չեմ կերել, որ  
իմ աչքերը քօռացնի: Բա էնքան խոզի ու  
պախրի մսերով առած աղ ու ալրիցն ինձ  
փայ չունեմ: Մէկ օր էլ ա դարտակ յետ չեմ  
դառել, քեզ նման չեմ ասել, որսըս կապել  
ա . . . կը կարմրես, հաբան, արջ . . .

— Ես արջ չեմ, ամմա դու էշ ես: Նորդ  
ա լեզուդ փոխել, ես ամմա էլի Դարաբաղի է-  
շերիցն ես . . .

Պօլոսի այս պատասխանը Արութիւնի  
ցեղական ցաւագար տեղին դիմչելով, նրան  
գժւացրեց: Նա ձեռքը դրաւ խանչալի կոթի

վրայ եւ մոռանալով Պօղոսի բառքառը, իր  
բարբառով արտօյայտեց բարկոթիւնը, ա-  
սելով.

— Սէրտս ասմա՛ երկաց Ես սըհաթըմն  
ընի դամադ կոխէ էս լլկուտէն փորը . . .

Սյգեադա, քօթէթ, էդ հիւրը էշ ասրմ . . .

— Բա . . . սա քաջքեր ա ունեցել, ես  
նոր իմացայ: Ախըր ես էլ եմ ասում, ինչի  
իրանց քօլերը թողած՝ եկել ա մեր հանգե-  
րումն ա հորսկանութիւն անում: Ախպէր,

ես քաջքոտ մարդի հետ դաւի չունիմ: վեր  
կենամ ըռադ ըլլիմ ըստեղանց: Ես ո՞րդիանց  
ո՞րդի էկաւ գլխովը ընկաւ: Էնդուր են ասել

«սատանէն նադարաթ կրլի» է . . . Վէր  
քցես, սպանես, ոլ իմանայ՝ ինչ կասի: Փուշը  
որ փուշա, մի ծտի գալդայ ա անում: Ես էն  
վախտը փշից էլ ըէթար սիտի ըլիմ: սա էս  
սըհաթն իմ դարդումն ա նստած: Ասած ա,  
«գոգումը նստեմ, միրուքը փետեմ»: դը-  
րուստ սրա բանն ա . . . Մի հետ սիլլա  
տամ, օխտը հետ շուռդուբանի կը տայ, սա  
էլ ա ուզում մարդի վախացնի: Փառք քեզ,  
վրկեռ, . . . Վեր կենամ ըռադ ըլլիմ; սրա

արիւնը ըընկնեմ . . . Ով գիդինիրա մօր  
մինուճարն ա. . . էշհ, ես էլ ինչ եմ ա-  
նում . . . Ով գիդի որ թոկից ա փախտէ. թէ լաւ մարդ ա, ինչի իրանց տանը չի կե-  
նում . . .

Սյազէս ինքն իրան երկար մըմուալով՝  
Պօղոսը վեր առառ հրացանը եւ ուզեց գուրու-  
գնալ, որ մի անսակնկալ տարաբախտութեան  
պատճառ չը գառնայ, բայց Արութիւնը որ-  
արդէն զղաց իւր անհամբերութեան համար,  
չուզեց թոյլ տալ նրան եւ կանչեց ետեւից  
սպառնալով՝

— Ե՛յ, ախմախ Լոռի, արի նստի տեղըգ,  
թէ չէ՝ մի գիւլս ա՝ քու ջանը . . .

— Հա— հա— հա . . . քրքջաց Պօղոսը:  
Տօս քու գիւլիցն ով ա վախում, իմ գիւլէն-  
քոնիցը պակաս մ . . . քաջքերը . . .

— Արի նստի, արի. ես քաջքեր չունիմ . . .  
ես քեզ խօսք եմ ասում, քու լաւութիւնն եմ  
ուզում, դու ինձ ասում ես էշ ես . . .

— Բա ինչի դու ինձ արջ ես ասում: դու  
որ ինձ չասես, ես էլ քեզ չեմ ասիլ: Քու  
աչքիդ գերանը դու չես տնսնում իսկի . . .

— Լաւ, լաւ, արի նստիւ Քեզ հետ  
մարդ չի բարըշիւ: Ես ա քանի ամիսա, մըտեղ  
հաց ենք ուտում, գեռ մին մինի չոռ չենք  
ասել. էդ գու հունարը չէր, իմ հունարն էր:  
Ես էլ որ քեզ նման ըլէի, պիտի ամեն օր  
ըսէնց կուէինք: Ես էլ չեմ ուզում ըստեղ  
մնալ. էգուց պիտի գնամ քաղաք: Դու մի ձի  
կըքրէհես, կը գաս պախրէն կը տանես:

— Քաղաք ինչի՞ ես գնում. ուզում ես  
մորթիքը տանես ընտեղ ծախե՞ս:

— Զէ, մորթիքը քեզ ըլին գիվ էլ, ես  
քեզանից փայ չեմ ուզում, փեթակնին էլ  
դիվ քեզ ըլմն . . .

— Հըմ . . . խռովեցիր հա . . .

— Ի՞նչ խռովելու բան ունիմ: բալքի դու  
ես խռովել, էնդուր ես ըսէնց ասում, արի  
բարըշենք, արի . . . մին մինի բախշենք . . .

— Արի բարըշենք—ինչի՞ դու չես գալիս  
ինձ մօտ, թէ որ բարըշին ուզում ես . . .  
Ուզում ես, որ ես գամ քու ոտքը . . . Դու  
ինքդ վեր կաց արի ինձ մօտ, ասա մեղայ  
Աստու, յետոյ ես քեզ կասեմ . . .

— Դէ որ ըսէնց ա, ոչ դու արի ինձ մօտ,

ոչ ես քեզ մօտ: Դու էլ վեր կաց, ես էլ  
Դու դէպի ինձ արի, ես դէպի քեզ: Ամսաւ  
— Դէ լաւ ըսէնց անենք, զարաքաղյին  
անկոտրում կըլի: Ես մի ոտ առ: դէ մի  
ոտ էլ դու առաջ գիր . . . Ես էրկու ոտ . . .  
հիմի մէկէլ ոտք փոխի . . . Ես իրեք . . .  
դէ ասա՝ մեղայ Ասծու . . .

— Ինչի՞ առաջ դու չես ասում? . . .

— Զէ, առաջ դու պիտի ասես,

— Զէ, դու պիտի ասես . . .

— Ոչ դու, ոչ ես, մըտեղ ասենք . . .

Սըտեղ ո՞նց ասենք, դէ դու ասա, ես  
էլ քեզ հետ կասեմ . . .

Վերջապէս «Մեղայ Ասծու» ասելը գը-  
լում չի գալիս: Սերտ սիրով գգվում են մի-  
մեանց եւ համբուրում իրար շրթունքից եւ  
յետոյ լուռ ու մունջ իրանց տեղերը նստում  
— մէկը խարոյկի այս կողմին, միւսն այն, մի  
հոգեկան անդորրութիւն եւ երանական զը-  
ւարձութիւն զգալով . . .

— Արութին, քաղքումն ինչ ունիս, որ  
ուզում ես գնաս, խօսեց վերջապէս Պօղոսը:

— Ենտեղ ընկերնի ունիմ, պիտի գնամ  
տեսնեմ: ու քայ դրէք ու վյա ձայ զայ դրէք առ  
— Ընկերնիդ ի՞նչ են շինում ընտեղ . . .  
— Վարժապետ են, էրեխէք են կարթառ  
ցում: առջ ու . . . զիք ուսում առ յ ու առ  
— Բա ասում ես ընկերնի ունիմ . . .  
Վարժապետ . . . էրեխայ . . .  
— Զարմանում ես համարմանալ: Ես էնքան կարթառ գիտեմ, որ ձեր տէրտէրը իմ կէսի կիսի զադամ բան չի գում . . .  
— Համարմանում ես համարմանալ: Ես էնքան կարթառ գիտեմ, որ ձեր տէրտէրը իմ կէսի կիսի զադամ բան չի գում . . .  
— Համարմանում ես համարմանալ: Ես էնքան կարթառ գիտեմ, որ ձեր տէրտէրը իմ կէսի կիսի զադամ բան չի գում . . .  
— Ինչի՞ ես «հըմ» անում . . .  
— Իէ ասում են՝ շատ կարթացողը կը գժւի, ես էլ . . .  
— Մի հաւատալ, շատ կարթացողը չի գժւի, քիչ կարթացողը կը գժւի . . .  
— Բա մեր տիրացուն ինչի՞ չի գժւում ասում են քիչ ա կարթացել: քր մայթակառ  
— Էնդուր չի գժւում, որ հէնց իմանում ա, թէ շատ ա կարթացել, որ գիտենար, թէ քիչ ա կարթացել, կը գժւէր . . .

— Եանի դրուստ ես ասում, դու գրի սեւն ու սպիտակը ջոկում ես . . . ես չեմ հաւատում . . .  
— Ինչի՞ չեմ հաւատում: շին սիստ նև սիստ նև  
— Իէ մեր գեղում ն ով որ կարդալ գիտի, էլ մորթ չի անում: ասում ա՝ մեղքա. շնահորսն էլ չեն ուտում: ասում են՝ հարամ ա . . .  
— Իրանք սարսաղ են, ի՞նչ են գիտում մեղքը մըն՝ ա, վարձքը որը: Բա ինչի՞ ուրիշի մորթածն ուտում են: գիտ մէկ չի, թէկուզ գողացած, թէկուզ գողի հետ մըտեղ կերած: Դրանց գլխումը ինելք ըս կայ, ի՞նչ որ ըղորթա, էն դրանց համար սուտ ա, ի՞նչ որ սուտ ա, էն ըղորթ . . .  
— Իուշ շատ դրուստ ես ասում, Արութին: էլ դրանց խօսքին ետ չեմ հաւատուու: . . .  
— Ինչի՞ թէ որ ըղորթ բան կասեն, եամի խելքը կըտրելու բան, հաւատա: . . .  
— Իէ ես ի՞նչ եմ գիտում ըղորթը ո՞րն ա, սուտը որը: էրկու տարին, եա թէ չէ՝ երեք տարին մի հետ անջախ եմ ժամ գը-

նում: Գնացած վախտըս էլ՝ մընում եմ պըլըշած, զարմացած, մոքումս ասում եմ՝ եարաբ էս ի՞նչ են անում, ի՞նչ են ասում: Մտիկ եմ տալիս ուրիշներին, երբ որ նրանք ծունդը են դնում, ես էլ եմ ծունդը դնում: Էրեսիս խէջահանելն հօ գրուտ յեմ գիդում . . . աղօթքներիցն էլ մի եւն եմ գիդում, մին էլ տէր ողորմեան: Էդ էրկուսն էլ էնդուր եմ սովորել, որ գրանցից շատ են ասում:

—Տէր ողորմեան շատ կասեն՝ էն էլ մեծ պասին, եւը շատ չեն ասիլ . . .

—Ի՞նչ ես ասում, Արութին, մեր տէրտէրը հէնց եւ ա, որ ասում ա, եւ հա եւ, եւ հա եւ . . .

—Ում աչքերը որ գիր տարած ա ըլում, նրա աչքին մենակ եւերն են էրեսում: Հալբաժ ձեր տէրտէրի աչքերն էլա գիր տարել, չունքի շատ կը լի կարթացած . . .

—Հա . . . նրա աչքերին չեշմակ էլ կայ . . . շատ չար տէրտէր ա: Մի հետ մի լաւ չափալախ տւաւ տիրացւին. վուշ կենդանի, ասում ա, նշանն ուր ա, ի՞նչի ես հանել: Ախըր գրքերի արանքներումը թղթի

կոտրներ են դնում, նրանց նշան են ասում: Արութին, դու էդ գիտե՞ս . . .

—Գիտեմ:

—Դու սուտ ես ասում, Արութին, ացես գիտում: Թէ որ դու կարթալ ես գիտում, աբա ասա, էն զադի անումն ի՞նչ ա, էն որ գիրը դնում են վրէն, կարթում . . .

—Նրան կասեն գրքակալ . . .

—Հա, գրքակալ, գրքակալ . . . էդ գըր կալի անումն ոչով չի գիտում, ես էլ մեր տիրացւիցն եմ իմացել . . . չէ, լաւ գտար: Արութին, դու որ ըտենց լաւ կարգացող ես, բա ի՞նչի մի օր մեր ժամը չես գնում:

—Մենք հէնց ամեն քշեր էլ ժամերումն չենք ըլում: Հըւս էս ժամ չի: Պողոս, հիմի քու խելքովըդ, Աստոծ մեծ կը լի, թէ էս ժամը . . .

—Հալբաժ Աստւած մեծ կը լի . . .

—Աստւած որ ժամիցը մեծ ըլի, էլ կը կարայ ժամումը տեղաւորվիլ . . .

—Բա դու չես տեսել ժամի Աստւածը . . .

—Էն Աստրծու պատկերն ա, ի՞նքը հօ չի: Աստւած շատ մեծ ա, շատ է շատ . . . նրա

պատկերը վոնց որ ժամումն ենք դնում, որ  
ամեն մարդ տեսնի, ընէնց էլ պէտք ա մեր  
սրտումը, մեր մտքումն ըլի: Մեր սրտումն  
ինչքան մեծ բան ասես, կը տեղաւորի: Երբ  
որ Աստւած մեր սրտումը կը լի, նա միշտ  
մեզ հետ կը լի, էլ ոչ մենք նրան ման կը  
գանք, ոչ էլ նա մեզ: Հիմի դու էս ասա. մէկ  
մարդու սիրտ որ խտակ ըլի, էլ ընտեղ Աս-  
տւած կը կենայ:

—Դու էդ ինչե՞ր ես ասում, խոր խոր  
տեղերից ես խօսում: Արութին, դու էն մեծ  
գիրը կարդացել ես, էն որ ասում են՝ ինչ  
ասես՝ միջին կայ. ով որ, ասում են, էն դիմի  
կարդացած ըլի, կը գժի:

—Ես էն չիմ (դիմ) կարդացել եմ,  
Պօղոս . . .

—Ի՞նչ ա ասում . . .

—Հաւատա՞:

—Դու բալքի չես գիտում, թէ ես ո՞ր  
գիրքն եմ ասում: Նա մեծ ա է, շատ մեծ:  
Մեր տիրացուն որ խտում ա, անջախ ա  
տանում ժամ, էնքան ծանդրա: Աշխարհիս

տակին ինչքան որ սրբեր են ըլել, բաներ են  
ըլել, չիմ էլ նրա միջին գրած ա: Բայց  
—Գիտեմ, գիտեմ, ես էն դիմի կարդա-  
ցել եմ: —Բա որ կարդացել ես, ինչի՞ բա միօր  
էլա նրա միջի սրբերիցը մի բան չասեցիր: —Գէ  
հիմի արի ասա էլի՞ . . . Միտքս  
վրէս չէր, թէ չէ՝ քեզ շատ բան կը պատմէի:  
Քո ուզած սրբերի տեղակ ես քեզ կը պատմէի:  
մեր զօշազ պապերիցը, որ իմանայիր, թէ  
մենք ով ենք, ի՞նչ ազգ ենք ըլել ու հիմի  
ի՞նչ օրն ենք: Ընկել:

—Գէ հիմի ըլի, մի էրկու բան էլա  
ասա, որ մտքումն պահեմ, էլ քեզ մտիցս զը-  
քցեմ:

—Հիմի ի՞նչ ասեմ, Պօղոս: Հիմի միայն  
էնքան կասեմ, որ մենք հայ ենք հայ: Ինչ-  
քան որ հայեր կանք, դիմ էլ ախպէր ենք,  
դիմ էլ մի հօրից ուր մի մօրից ենք բհամ  
էկել: Մեր պապի պապի, նրա էլ ապուպապի  
անումը ՀԱՅԿ ա ըլել, էնդուր ենք մենք հայ  
առևում:

«Մեր պապ Հայկը էնպէս մի քաջ տղամարդ

ա ըլել, որ իր որդոց ու թոռների հետ հազար հազար մարդի հետ ա ըլել կուելիսէ էնքան ջանով ա ըլել, որ նրա նետ ու անեղը տասը մարդ կարալիս չի ըլել տեղիցը ժաժառակ: Նա մի գուշման ա ունեցել, անումը Բէլ: Էս Բէլն էլ էնքան աժդահա, էնքան ջանաւար մի մարդ ա ըլել, որ էն ժամանակին ինչքան մարդիկ են ըլել, աշխարքիս վրայ չիմնին էլ իր ձեռքի տակն ա հաւաքել, դիմունանքն էլ նրան գլուխ են վէր բերել, ասել են՝ «Մեր Աստոծը գու ես որ կատ, ուրիշ Աստոծ չենք ճանաչում»: Մեր պատ Հայկը նրան գլուխ չի վեր բերել, ասել ա՝ «զու շուն ես, դու աղւէս ես, դու ովլ ես, ինչ ես, որ ես քեզ գլուխ վէր բերեմ»: «Բէլը բարկացել ա, անհամբարք զօշուն ա հաւաքել ու գնացել, որ մեր պատ Հայկին սպանիր Արեւին մատաղ մեր պատ Հայկի: ասել ա՝ «Տղէք ջան, զօշաղ կացէք, իմ անումը չը կոտրէք, ես դրա ջամդանքը էսօր դուրդ ու զուշի փայ կը շինեմ»: Հէնց ըստէնց էլ արել ա: Հաւաքել ա իրա տղոցն ու թոռներին, գնացել ա Բէլի անհամբարք զօշունի:

առաջը կտրել: Իրա նետ ու անեղը որ զել ա, վրայ արել, նետը գիւղի նման գժեալով Բէլի սրտին ընէնց ա գիսել, որ պղնձով ծածկած դօշի միջովն անց ա կացել, մէջքով դուրս եկել: Աժդահա Բէլը պառաւած աշճարքու նման ճըռճըռալով, գլորւելը վէր ա ընկել, աստկող հաւի նման կլափին տալով շունը փէել: թիւ նարանց ցնողու նախարար «Իէ, հիմի հասէք, տղէք ջան, — ձէն ա տւել մեր պատ Հայկը, — դէ Տիմի հասէք էդ անիճածներին կոտրեցէք, որ էլ մերաշա խարքումը ոտը չը դնեն»: արև ա զաշը ան «Բէլի զօշունը որ տեսնում են իրանց պաշտած աստըծուն սատկացրած՝ դողում սարսափում են: Հայկի ամլան տղէքն ու թոռները որ հասնում են, ընկնում նրանց մէջը, ոչխարների նման ջարդում, նրանք էրեսները շուր են տալիս փախչում: Եղ օրգանից դէսը էլ ոչով չի համարձակում մեր աշխարհքի վրայ կռիւ գալ, Հայկի անունն էլ մըհրում ա մեզ վրայ ու մեր աշխարհքի վրայ, մենք ասում ենք ՀԱՅ, մեր աշխարհքը էլ ՀԱՅՈՒՏՈՒՆ: միքանց նախորդ մասն

— Բահ, նրա արեւին մատաղ, Արէն տղամարդն է, Մենք էլ պիտի ասենք մարդ ենք էլի, վախախ ունենք գլխներիս, Բա հիմի խի ենք ըսենց վատացել, Արութին, բա չենք ամանջում:

— Ենդուր ենք վատացել, վշացել, կնիկ դառել, որ մեր պապին թողած, բէլերին ենք պաշտում, ըղորթը թողած մեզ սուտ բաներ են քարոզում, Ինչիդ ա պէտք, դու հիմի իմացար, թէ ինչ մարդ ա ըլել մեր պապը: Ով որ իր պապին չը քաշի, նրա նման չը լի, նա պէտք ա նրա հալալ թոռը չը լի: Թէ որ սաղ կը մնամ, մէկ օր էլ կը պատահենք մին մինի, էն վախտը էսպէս բաների վրայ շատ կը խօսենք: Ասած ա, «Սար սարի չի ուստ գալ, մարդ մարդի ուստ կը գայ»: Դու զօշաղ կաց, մենք յետոյ շատ բաներ կանենք:

— Քու բերանին մատաղ, Արութին: Ասած ա, «Առաջին տեսնելիս ընկեր, վրայ էր կուսին՝ ախպէր»: Մէկ էլ որ գաս, իմ ախպէրը կը ես, իմ մեծ ախպօրս անունն էլ էր Արութին, էնդուր ա իմ մէրը քեզ որդու նման սիրում: Ողորմած հոգին հարուր թուրքի

չէր ասիլ, թէ Աստւած ա ստեղծել: թէ որ նրա անումը մտքից կը նկնի, քու անումն էլ կը նկնի: Հիմիկուց դէնը զու իմ ախպէր Արութինն էս:

— Մէնակ ես չեմ քո ախպէրը, ինչքան որ հայեր կան, դիմի էլ մեր ախպէրքն են, քու մէրն էլ իմ մէրն էլ ա, դիմիունանց մէրն էլ: Պօղոս, դու նրա սիրու մխիթարի, պատիւր պահի: Քու օրումը նրան մի քաղցր խօսք չես ասած, մի անգամ նրա սիրու չես շահած, էդ լաւ չի, Պօղոս, լաւ չի, Աստւած չի վեր կալնիլ, կը բարկանայ գլխիդ:

— Հաւատո՛, Արութին ջան, հէնց հիմի գնամ թէ չէ, պիտի մօրս ծծերիցը պաշեմ, մեղայ ասեմ: էլ իմ օրումը նրան չօւ չեմ ասիլ, միշտ «ջանով» կը խօսեմ: Խեղճը կը զարմանայ, կասի «էս վոնց էլաւ, որ ըսէնց էլաւ»: Հալալ ըլի քու կերած կաթը, Արութին ջան, իգիթ ես, իգիթ . . . . .

— Դէ լաւ, շատ մի գովի: Էնքան խօսեցինք որ լուսացաւ: Դէ, մնաս բարով, ես գնում եմ:

— Գնաս բարով, քե մատաղ, — ասաց Պօղոսը,

Եւ նրա աչքերը լցւեցին արտասունքով։ Մեր  
տղեկը համբուրեցին միմեանց։ Արութիւնը  
հեռացաւ ուրախ զրւարթ, իսկ Պօղոսն ընկաւ  
խոր տիրութեան եւ մոտածութեան մէջ։  
— Ո՞վ էր սա, ո՞րտեղից եկաւ, ինչու  
եկաւ, ինչու բաժին չտացաւ մեր աշխատան-  
քից։ Եւ սրա նման շատ հարցումներ արաւ  
ինքն իրան Պօղոսը եւ վերջն այն եղբակացու-  
թեան եկաւ, որ Արութիւնն մի անգին գիւտ  
էր իր համար, բայց ինքը չիմացաւ նրանից  
ոգուտ քաղել բարոյապէս։ Այս գէպքից յե-  
տոյ Պօղոսի մոտածութեան եղանակը փոխւեց,  
նաև սկսեց երեւակայել իրան մի այլ աշխարհ,  
եւ միշտ կարօտով սպասում էր Արութիւնին,  
որ նա գայ եւ մոտցնէ նրան այդ նոր աշ-  
խարհը։ Արութիւնն այլ եւս չը հանդիպեց  
Պօղոսին, բայց նրան հանդիպեցին Արութիւնի  
նման մարդիկ, որոնք հետզհետէ ծնունդ ա-  
ռան եւ ժամանակակից լուսաւոր մոքերը  
տարածեցին մեր երկրի մութ ու մոռացւած  
խորշերում եւ անկիւններում։




be tipo mphagia etiologia appurata. Il tipo  
miglior esemplificativo è probabilmente il quell'infarto  
che accade quando un polpo si nutre di un  
pesce, ma spesso si tratta di un fenomeno più

comune. Un'altra storia tipologica riguarda i pescatori  
le cui afflizioni guardano proprio alle malattie dei  
pesce che hanno catturato. Sarebbe ad esempio stra-  
nge se non fosse che questo sia l'aspetto più  
frequente delle malattie dei pescatori, anche  
se per fortuna i pescatori sanno tutto  
sugli effetti dei pesce sui pescatori. Una terza storia  
riguarda le donne che hanno la tendenza  
di mangiare troppo e di soffrire di una  
malattia denominata "malattia del  
cervello". Ma negli ultimi anni sono state  
trovate altre malattie, come quelle che  
consistono nel fatto che le donne hanno  
un'anomalia genetica che le fa essere più  
vulnerabili alle malattie del cervello. An-

5033-50 MP

291

11



110  
2013  
5623  
5624  
5625-

2013

Հայաստանի Ազգային գրադարան



NL0432968

Հայաստանի Ազգային գրադարան



NL0432967

Հայաստանի Ազգային գրադարան



NL0432966

2013

